Крестьянская газета

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Ս. ԴԱՆԻԼԻՆ

# Պատի թերթի խմբագրի ԱՇԽԱՏԱՆՔԸ



ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ և ԲՐԻԳԱԴԱՅԻՆ — ԴԱՇՏԻ ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ ՀԵՌԱԿԱ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

07.01
Դ-17

ՀԿ(Բ)ԿԿԿ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ»

ՅԵՐԵՎԱՆ
1938

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Պատի թերթի խմբկոլի աշխատանքը . . . . . 3
Գյուղթղթակցային ակտիվի կազմակերպումը . 9
Պատի թերթի աշխատանքի պլանը . . . . 14
Խմբկոլի խորհրդակցությունը . . . . . . . 20
Բոլշևիկյան զգոնության մասին . . . . . . . 22
Ինքնաքննադատությունը ծավալել խմբկոլում . 25
Թղթակցությունների ընտրությունն ու մշակումը 28
Պատի թերթը լույս տեսնելուց հետո . . . . . 33
Թղթակցությունների գործունությունը . . . . 37
Խմբագրի հաշվետվությունը . . . . . . . . 42
Պատի թերթի «տնտեսությունը» . . . . . . . 44

07.01
Դ-417
19 JUN 2009

Ս. ԴԱՆԻԼԻՆ

# ՊԱՏԻ ԹԵՐԹԻ ԽՄԲԿՈԼԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Կոլտնտեսային յեվ բրիգադային պատի թերթի խմբագիրների

ՀԵՌԱԿԱ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ԵՐԵՎԱՆ 1938

28 MAR 2013

15144

Պատ. խմբագիր՝ ՀՐ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Սրբագրիչ՝ Խ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

5290
38

ՅԵՐԵՎԱՆ, «ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ի ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ՏՊԱՐԱՆ

Պատվեր № 437, տիրաժ 1500, Գլավլիտ № 6652

# ՊԱՏԻ ԹԵՐԹԻ ԽՄԲԿՈԼԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Շատ կոլտնտեսային թերթերի լուրջ թերություններից մեկը նրանց անկանոն լույս ընծայումն է։ Ցանքի կամ բերքահավաքի ժամանակ պատի թերթերը շատ թե քիչ կանոնավոր են լույս տեսնում, բայց հենց վոր դաշտային աշխատանքի յեռուն որերն անցնում են, պատի թերթերի ակտիվությունը միանգամից իջնում է։

Բազմաթիվ պատի թերթեր լույս են տեսնում շատ ուշ-ուշ, դեպքից-դեպք, հարմարվելով միայն տոնական որերին։

Աշխատանքի անկազմակերպությունը բնորոշ է նույնիսկ շատ այնպիսի պատի թերթերի համար, վորոնք լույս են տեսնում կլոր տարին։ Այդ բանը տեղի յե ունենում առաջին հերթին այնտեղ, վորտեղ պատի թերթը լույս է ընծայում միայն խմբագիրը, իսկ գյուղթղթակիցները, ակտիվ կոլտնտեսականները պատի թերթի աշխատանքի մեջ չեն ներգրավվում։

Հապա ինչպե՞ս խուսափել պատի թերթի լույս ընծայման ընդհատումներից և ճիշտ կազմակերպել նրա աշխատանքը։

Պատի թերթը կոլտնտեսական մասսաների կոլեկտիվ ստեղծագործության և ինքնագործունեյության արդյունք է։ Նա պետք է պատրաստվի կոլեկտիվ ուժերով։

Ամենից առաջ պետք է պատի թերթի և կոլտնտեսական մասսաների մեջ կապ ստեղծել։ Պետք է այնպես անել, վոր նրանք իրենց լավագույն ներկայացուցիչներին ընտրեն պատի թերթի խմբկոլում։ Պատի թերթի վորակն ու ժամանակին լույս ընծայումը, նրա կապի ամրացումը մասսաների հետ կախված է այն բանից, թե կոլտնտեսականները վորքան ճիշտ կմոտենան խմբկոլի անդամներ ընտրելու գործին, թե խմբկոլը ինչպես կկազմակերպի իր աշխատանքը։

Պատի թերթի խմբագրական կոլեկտիվը հենց նրա համար էլ կազմակերպվում է, վորպեսզի թերթը լույս ընծայվի կոլեկտիվ ու-

ժերով, վորպեսզի նա միշտ հենվի կոլտնտեսական մասսաների վրա և լինի հասարակական առաջավոր կարծիքի արտահայտիչը կոլտնտեսությունում:

Ճիշտ չեն վարվում կուսակցական կազմակերպությունների ու կոլտնտեսությունների այն ղեկավարները, վորոնք պատի թերթի խմբագրական կոլեգիայի անդամներին նշանակում են: Դա խորհրդային, կոլտնտեսային դեմոկրատիայի խախտում է: Պատի թերթի խմբկոլը պետք է ընտրվի կոլտնտեսականների ընդհանուր ժողովում, լայն դեմոկրատիայի և բոլշևիկյան ինքնաքննադատության հիման վրա:

Խմբկոլի ընտրություններին պետք է նախորդի նախապատրաստական մեծ աշխատանք, վորին կուսկազմակերպության ղեկավարությամբ մասնակցում են ամենաակտիվ գյուղթղթակիցները: Նրանք զրույցներ են ունենում պատի թերթի նշանակության մասին, հավաքում են առաջարկություններ, որինակ՝ այն մասին, թե կոլտնտեսականները կուզեյին վոր ինչպիսին լինի իրենց պատի թերթը: Դաստիարակչական լայն աշխատանքի հետևանքով կոլտնտեսականների համար կպարզվի պատի թերթի ոգուտն ու նշանակությունը, ակտիվ մասնակցություն կունենան խմբկոլի ընտրություններին:

Պատի թերթի խմբկոլի ընտրությունը քաղաքական լուրջ գործ է: Խոսքը վերաբերվում է ստորին մամուլի կադրերին, այն մարդկանց, վորոնք պատի թերթի միջոցով պետք է արտահայտեն կոլտնտեսության առաջավոր հասարակական կարծիքը, կոլեկտիվ ագիտատորի, պրոպագանդիստի և կազմակերպչի դեր կատարեն:

Դրա համար էլ խմբկոլի մեջ պետք է ընտրել հեղինակավոր ընկերների — ստախանովականների ու հարվածայինների, հասարակական լավ աշխատողների ամենաակտիվ ու քաղաքականապես կայուն գյուղթղթակիցների, առաջավոր կոլտնտեսականների, նրանց, ովքեր գործնականում հեղափոխական զգոնություն են ցուցաբերում, ովքեր դեպի աշխատանքը սոցիալիստական վերաբերմունքի օրինակներ են ցույց տալիս և դրա հետ միասին, աշխուժորեն հետաքրքրվում են պատի թերթով:

Հարկավոր է զգոնություն ցուցաբերել, վորպեսզի կուսակցությանն ու խորհրդային կարգերին խորթ մարդիկ խմբկոլի մեջ չընկնեն:



Դժբախտաբար մի շարք կոլտնտեսություններում պատի թերթի խմբկոլի մեջ խցկվել ու խցկվում են թշնամական մարդիկ: Միայն զգոնության բացակայությամբ կարելի յե բացատրել այն, վոր մի շարք պատի թերթերի խմբկոլների մեջ կարողացել են խցկվել տրոցկիստներ ու ժողովրդի այլ յերդվյալ թշնամիներ:

Կոլտնտեսային պատի թերթի խմբկոլի ընտրության ժամանակ սխալներից խուսափելու համար կուսակցական կազմակերպությունը, կոլտնտեսային ակտիվն ու գյուղթղթակիցները պետք է խնամքով ուսումնասիրեն խմբկոլի մեջ ընտրվելու համար նախատեսված յուրաքանչյուր մարդուն իսկապես աշխատունակ և հեղինակավոր կլինի միայն այն խմբկոլը, վորը կազմված է արտադրության առաջավորներից և Լենինի-Ստալինի գործին նվիրված ակտիվ հասարակական աշխատողներից:

Ընդհանուր ժողովում խմբկոլ ընտրելու կարգը մոտավորապես հետևյալն է: Նախ խմբագիրը հաղորդում է անում պատի թերթի աշխատանքի և նոր խմբկոլ ընտրելու անհրաժեշտության մասին: Դրանից հետո թող իրենք՝ կոլտնտեսականներն ու կոլտնտեսուհիներն արտահայտեն իրենց կարծիքը պատի թերթի մասին, պատմեն նրա թերությունների մասին և իրենց առաջարկությունները անեն, թե ինչպես լավացնել պատի թերթի աշխատանքը, ինչպես ամրացնել նրա կապը մասսաների հետ: Թող ավելի շատ քննադատություն ու ինքնաքննադատություն լինի պատի թերթի աշխատանքի քննարկման ժամանակ: Թող կոլտնտեսականները զգան, վոր պատի թերթն իրենց սեփական գործն է և վոր ամբողջ կոլեկտիվը պետք է մտահոգվի, վորպեսզի պատի թերթը դարձնեն իսկական մարտական բոլշևիկյան մամուլի օրգան:

Պատի թերթի աշխատանքի և նրա խնդիրների բազմակողմանի քննարկումից հետո պետք է սկսել խմբկոլի անդամների ընտրությունը: Այդ ընտրությունները կատարվում են վոչ թե ցուցակով, այլ անհատապես: Հարկավոր է խնամքով քննության առնել յուրաքանչյուր թեկնածություն, վորի ընթացքում պետք է հաշվի առնել խմբկոլում ընտրելու համար առաջարկված ընկերոջ քաղաքական ու գործնական հատկությունները, ինչպես և նրա ցանկությունը և պատի թերթում աշխատելու ընդունակությունը:

Յուրաքանչյուր թեկնածությունը քննարկվելիս ժողովը պետք

է հաստատ համոզված լինի, որ խմբկոլի մեջ ընտրվող ընկերը կկարողանա ապահովել պատի թերթի անընդհատ լույս ընծայումը, կկարողանա ժողովրդի թշնամիների նկատմամբ անհաշտություն ու անողոքություն հանդես բերել, կկարողանա զգայուն և ուշադիր վերաբերմունք ցուցաբերել դեպի աշխույժ մարդիկ, Լենին-Ստալինի գործին նվիրված մարդիկ, որ նա պատի թերթում բոլշևիկյան քննադատություն և ինքնաքննադատություն կըծավալի կգրի թղթակցությունների գործունեությունը և հաշվի կառնի կոլտնտեսականների արժեքավոր առաջարկությունները: Ժողովը պետք է նաև համոզված լինի, որ ընտրելիք ընկերն իրոք հետաքրքրվում է գյուղթղթակցական աշխատանքով և ցանկանում է ակտիվ մասնակցություն ունենալ բոլշևիկյան մամուլին:

Քանի՞ մարդ ընտրել պատի թերթի խմբկոլում: Այդ հարցը լուծվում է՝ նայած տեղական պայմաններին՝ կոլտնտեսության մեջ եղած մարդկանց թվին, պատի թերթի լույս ընծայման ժամկետներին և այլն: Կոլտնտեսային պատի թերթի մեծ մասի փորձը ցույց է տալիս, որ ամենից լավն է խմբկոլն ընտրել 5 մարդուց ոչ պակաս կազմով:

Ինչ վերաբերվում է պատի թերթի խմբագրին—ապա նրան առաջադրում է կուսակցական կազմակերպությունը՝ լավագույն գյուղթղթակիցներից- կոմունիստներից, կոմերիտականներից, համակրողներից, կուսակցական ու ոչ կուսակցական բոլշևիկներից:

Խմբագիրն անմիջական քաղաքական պատասխանատվություն է կրում խմբկոլի ու պատի թերթի ամբողջ աշխատանքի համար: Խմբագիրն ու խմբկոլի անդամները պետք է լինեն կոմունիստական կուսակցությանն ու կոլտնտեսային կարգերին նվիրված մարդիկ, քաղաքականապես գրագետ, նախաձեռնող, կոլտնտեսական լայն մասսաների մեջ աշխատելու կարողությամբ:

Ճիշտ են վարում այն կուսակցական կազմակերպությունները, որոնք ցանկանալով բարձրացնել կոլտնտեսային պատի թերթի խմբագրի հեղինակությունը, հաստատում են նրա թեկնածությունը և առանց կուսկազմակերպության համաձայնության թույլ չեն տալիս նրան հանել այդ աշխատանքից:

Եթե խմբկոլի առանձին անդամներ այս կամ այն պատճառով խմբկոլի կազմից դուրս են ցեկել, նրանց տեղը նոր մարդիկ պետք է



ընտրել: Այն դեպքում, երբ ամբողջ խմբկոլն անաշխատունակ է դուրս ցեկել, կոլտնտեսականների ընդհանուր ժողովը նրան համապատասխան գնահատական է տալիս և կազմակերպում է նոր խմբկոլի ընտրություն:

Նոր ընտրված խմբկոլն ինչի՞ց պետք է սկսի իր աշխատանքը: Նախ և առաջ պետք է ամուր կապ ստեղծել գյուղթղթակիցների հետ, կուսակցական ու կոմյերիտական կազմակերպությունների հետ, կոլվարչության հետ, ինչպես և հասարակական կազմակերպությունների հետ: Միշտ պետք է նշել, որ պատի թերթի աշխատանքի հաջողությունը կախված է կուսակցական ճիշտ ղեկավարությունից: Պատի թերթը պետք է լինի կուսակցական կազմակերպության ակտիվ օգնականը: Պատի թերթի աշխատանքը կուսակցական աշխատանք է:

«Մամուլը, — ասում մեր ընկեր Ստալինը կուսակցության XII համագումարում,— միակ զենքն է, որի օգնությամբ կուսակցությունն ամեն օր, ամեն ժամ խոսում է բանվոր դասակարգի հետ նրա, իրեն հարկավոր լեզվով: Կուսակցության և դասակարգի միջև հոգեկան թելեր ձգելու ուրիշ միջոցներ, մի ուրիշ այդպիսի ճկուն ապարատ բնության մեջ չկա»:

Պատի թերթերի խմբկոլները պետք է աշխատեն կուսակցական ու կոմյերիտական կազմակերպությունների լոտ ամենայնի աջակցությամբ ու ղեկավարությամբ:

Առանձնապես կարևոր է պատի թերթի աշխատանքին մասնակից դարձնել կուսակցական ակտիվը: Կոմունիստների օգնությամբ պատի թերթը պետք է չարունակ լուսաբանի կուսակցական կյանքը:

Պատի թերթի դերն անսահման մեծանում է այժմ, կուսակցական ղեկավար օրգանների ընտրության ժամանակ: Պատի թերթը պետք է լուսաբանի այդ ընտրությունների ընթացքը, պայքարի, որ ընտրությունները տեղի ունենան ներկուսակցական դեմոկրատիայի և բոլշևիկյան ծավալուն ինքնաքննադատության հիման վրա, լրիվին համապատասխան, ՀամԿ(բ)Կ Կենտկոմի «Կուսակցական ղեկավար օրգանների ընտրությունները կատարելու մասին» վորոշմանը: Կոմունիստների օգնությամբ պատի թերթը պետք է պայքարի կուսակցական – քաղաքական աշխատանքի լոտ ամենայնի բարձրացման համար, ցույց

տա կոմունիստների ավանգարդային դերն արտադրության մեջ, նրանց գաղափարական մակարդակի աճումը:

Պատի թերթի խմբագիրը խմբկոլի աշխատանքի մասին պետք է հաշիվ տա կուսակցական ժողովին և կոլտնտեսականների ընդհանուր ժողովին: Կուսակցական կազմակերպությունն էլ իր կողմից պետք է ամենօրյա օգնություն ցույց տա խմբագրին ու խմբկոլին, նրանց ցուցումներ տա, վորպեսզի պատի թերթն իր լուսաբանած բոլոր հարցերում և իր ամբողջ ագիտացիոն, պրոպագանդիստական ու կազմակերպչական-մասսայական աշխատանքում անշեղորեն կիրառի կուսակցության գիծը:

Իր աշխատանքի մասին կուսակցական ժողովներում հաճախ է հաշիվ տալիս «Հնգամյակը 4 տարում» կոլտնտեսության պատի թերթի խմբագիր Ցագևը (Որլովի մարզի Մցենսկի շրջան): Այդ խմբկոլն աշխատում է սերտ կապ պահպանելով կուսկազմակերպության հետ: Կուսկազմակերպիչ Սազոնովն ամենօրյա օգնություն է ցույց տալիս պատի թերթին և հանդիսանում է նրա ակտիվ գյուղթղթակիցը:

Պատի թերթի խմբկոլի սերտ կապը կուսակցական կազմակերպության և կոմյերիտմիության հետ՝ նրան կօգնի ավելի լավ կազմակերպել գյուղթղթակիցների բոլշևիկյան դաստիարակությունը, կարգավորել մասսայական աշխատանքը և հասնել գյուղթղթակիցների տված թղթակցությունների գործունեության:

Այդ դեպքերում, յերբ կուսկազմակերպությունը թուլացնում է իր ուշադրությունը պատի թերթի նկատմամբ, խմբագիրը պետք է կոլտնտեսային կուսկազմակերպության, ինչպես և կուսակցության շրջկոմի առաջ համառորեն հարց դնի, վորպեսզի ուժեղացվի պատի թերթի ղեկավարությունը: Խմբկոլներին խորհուրդ է տրվում կուսկազմակերպիչներին հրավիրել գյուղթղթակիցների խորհրդակցություններին և խմբկոլի այն նիստերին, վորտեղ քննվում են պատի թերթի աշխատանքի կարևորագույն հարցերը:

---



# ԳՅՈՒՂԹՂԹԱԿՑԱՅԻՆ ԱԿՏԻՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ընտրություններից հետո խմբկոլը պետք է հավաքվի՝ քննարկելու համար պատի թերթի աշխատանքի կոնկրետ, գործնական հարցերը:

Խմբկոլի ամենաառաջին խնդիրն է՝ գյուղթղթակցային ակտիվ կազմակերպել և ապահովել բովանդակալից, իսկապես բոլշևիկյան պատի թերթի ժամանակին լույս ընծայումը: Խմբկոլի ամբողջ աշխատանքը սրան պետք է յենթարկվի:

Հենց սկզբից գործն այնպես պետք է դնել, վոր վոչ միայն խմբագիրը, այլև ամբողջ կոլեկտիվը, խմբկոլի բոլոր անդամները ջերմ մասնակցություն ունենան պատի թերթի ակտիվ ստեղծելու գործում, ապահովեն նյութերի անընդհատ ստացումը և ամբողջ տարվա ընթացքում պատի թերթի անընդհատ լույս ընծայումը:

Ակտիվին պատի թերթի աշխատանքի մեջ ներգրավելու համար կոլտնտեսություններում կան բոլոր պայմանները:

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների նախապատրաստության ու կատարման ժամանակ գյուղում աճեցին կուսակցությանն ու խորհրդային իշխանությանը նվիրված նորանոր հարյուր հազարավոր կուսակցական ու անկուսակցական կազմակերպիչներ, ագիտատորներ ու պրոպագանդիստներ:

Որեցոր ընդարձակվում է ստախանովյան շարժումը և կոլտնտեսությունների ու կոլտնտեսականների սոցիալիստական մրցությունը գյուղատնտեսության մեջ նորանոր հաղթանակների հասնելու համար:

Կոլտնտեսային պատի մամուլը պետք է կազմակերպի ստախանովականների ու հարվածայինների փորձի փոխանակում, ձգտի, վոր յուրաքանչյուր կոլտնտեսական սովորի ստախանովաբար աշ-

խառնել: Կոլտնտեսային արտադրության ստախանովականներն ու հարվածայինները ճիշտ են գնահատում պատի թերթը՝ վորպես իրենց փորձի փոխանցման տրիբուն, գյուղատնտեսությունը վարելու ստախանովյան մեթոդները ամրապնդելու համար, կոլտնտեսության մեջ յեղած թերությունները քննարկելու համար, ուսման, կուլտուրայի, կենցաղի և այլ հարցերի մասին իրենց մտքերն արտահայտելու համար:

Հետևապես այժմ ավելի քան յերբեք, պատի թերթերը բարենպաստ պայմաններ ունեն գյուղթղթակիցների ակտիվ աճեցնելու համար: Ստախանովականները, հարվածայինները, ագիտատորներն ու պրոպագանդիստները, կուլտուրական աշխատանքի առաջավոր նախաձեռնողները, հետաքրքիր ձեռնարկումներ նախաձեռնողները, պաշտպանության գործի ենտուզիաստները—ահա այն մարդիկ, վորոնց պետք է համառորեն ու անդադրում կերպով մոտեցնել պատի թերթին:

Պատի թերթի ակտիվի հետ պետք է աշխատանք կատարել: Չի կարելի գործն այնպես պատկերացնել, թե բավական է ստախանովականին խնդրել, վոր գրի թերթում և նա անմիջապես ակտիվ գյուղթղթակից կդառնա: Ակտիվ դաստիարակելու գործը խմբագրից ու խմբկոլի անդամներից պահանջում է համբերատար ու համառ աշխատանք: Հարկավոր է մարդկանց հետաքրքրել թերթի աշխատանքով, հարկավոր է հաշվի առնել յուրաքանչյուր գյուղթղթակցի ընդունակությունները, ոգնել նրան, վոր գրի իրեն հետաքրքրող հարցերի մասին:

Կոլտնտեսականին թերթի աշխատանքին մասնակից դարձնելու ամենալավ միջոցն է՝ անձամբ զրույց ունենալ նրա հետ և պատի թերթում նրան այնպիսի աշխատանք տալ, վորն իսկապես նրան հետաքրքրում է:

Մի ընկեր, ասենք թե, հետաքրքրվում է դաշտավարությամբ, մի ուրիշը լավ գիտե գյուղատնտեսական մեքենաները, յերրորդը հանդիսանում է պաշտպանության աշխատանքի կազմակերպիչ և այլն և այլն: Յեթե խմբագիրը և խմբկոլի անդամները լավ են ճանաչում յուրաքանչյուր կոլտնտեսականի, ապա նրանք նրան պատի թերթի աշխատանքի մեջ կներգրավեն հենց այն հարցերով, վորոնք նրան ավելի շատ են հետաքրքրում: Յենթադրենք, թե կոլտնտեսականը նկարչության հակումն ունի, նշանակում է՝ նրան պետք է խնդրել, վոր նկարներ տա պատի թերթին՝ նշելով



նկարների թեմաները: Տվյալ դեպքում լավ է գյուղթղթակցի թղթակցության մեջ հաղորդված վորևե փաստի հիման վրա կարիկատուրա նկարել: Նկարչության սեր ունեցողին հարկավոր է մասնակից անել նաև պատի թերթի գեղարվեստական ձևավորման գործին: Վերցնենք մի ուրիշ դեպք: Յենթադրենք կոլտնտեսականը ցանկանում է իր ուժերը փորձել յերգիծաբանական թղթակցություն գրելու մեջ: Շատ հիանալի յե: Թող նա ֆելետոն գրի պատի թերթի համար: Հենց այդ էլ կոնկրետ մոտեցում է յուրաքանչյուր կոլտնտեսականի: Խմբագիրը պետք է ճանաչի իր կոլտնտեսության մարդկանց, ուսումնասիրի նրանց հակումները, ավելի հաճախ զրույց ունենա մարդկանց հետ և նրանց ոգտագործի այնտեղ, վորտեղ նրանք ավելի շատ ոգուտ կտան պատի թերթին:

Պատի թերթը պետք է իր գյուղթղթակիցներն ունենա կոլտնտեսային արտադրության բոլոր բնագավառներում՝ դաշտային բրիգադներում ու ողակներում, անասնապահական ֆերմաներում, կոլտնտեսության դարբնոցում, ակումբում, ինքնագործ խմբակներում, դպրոցում, կուսակցական ու անկուսակցական ագիտատորների, պաշտպանության աշխատանքի ակտիվիստների մեջ և այլն: Այդպիսի լայն ու կենդանի կապի պայմաններում իր կոլտնտեսության մարդկանց խորապես ճանաչելու պայմաններում միայն խմբկոլը կկարողանա ապահովել թղթակցությունների սիստեմատիկ ստացումը և պատի թերթում բազմակողմանիորեն լուսաբանումն այն բոլոր առորյա արտադրական ու քաղաքական հարցերի, վորոնք հետաքրքրում են ընթերցողներին:

«Մայակ կուլտուրի» կոլտնտեսության մեջ (Ռոստովի մարզի Ռադիոնո-Նեսվետայեվյան շրջան) գյուղթղթակիցներ կան կոլտնտեսության աշխատանքի բոլոր բնագավառներում: Նրանցից յուրաքանչյուրը պատի թերթին գրում է աշխատանքի այն բնագավառի մասին, վորն իրեն ավելի մոտ ու ավելի ծանոթ է: Այսպես, որինակ, անասնապահական ֆերմայում աշխատող գյուղթղթակից Պանյուտան թերթում լուսաբանում է անասնապահության հարցերը, գյուղթղթակից Ռուժանինը՝ գյուղատնտեսական մեքենաների նորոգումը և այլն: Դրա շնորհիվ պատի թերթը միշտ էլ տեղյակ է կոլտնտեսության կյանքին:

Հաճախ վորոշ կոլտնտեսականներ սկզբում սիրով չեն սկսում թղթակցություններ գրել, պատճառաբանում են, թե չեն կարող

իրենց մտքերը չարադրեր թղթի վրա: Այդ բանը չպետք է հուսահատեցնի խմբկոլին: Հարկավոր է ոգնել սկսնակ հեղինակին, թեման նշել, նրա հետ միասին թղթակցության պլանը կազմել, ոգնել նրան գրելու այդ թղթակցությունը և աստիճանաբար կոլտնտեսականին սովորեցնել, վոր ինքնուրույն կերպով իր միտքը շարադրի թղթի վրա:

Այդպիսի «բանավոր թղթակիցների» հետ պատի թերթերի խմբկոլները նույնպիսի սերտ կապ պետք է պահպանեն, ինչպես և գրող գյուղթղթակիցների հետ, նրանց պետք է համարել ամենաիսկական գյուղթղթակիցներ, հրավիրել գյուղթղթակիցների ժողովներին, խմբկոլի խորհրդակցություններին, վորոշակի աշխատանքներ հանձնարարել պատի թերթի համար: Բայց, միևնույն ժամանակ հարկավոր է նրանց ոգնել, վոր սովորեն վոչ միայն բանավոր հաղորդել իրենց մտքերը, այլև կարողանան ինքնուրույնաբար գրել:

Հոգատար վերաբերմունքը դեպի յուրաքանչյուր առաջարկություն դեպի կոլտնտեսականի, մանավանդ նոր գրել սկսողի, յուրաքանչյուր թղթակցությունը կբարձրացնի խմբկոլի հեղինակությունը և կշատացնի նրա ակտիվը: Միայն լուրջ դաստիարակչական աշխատանքով կարելի յե ստեղծել թղթակիցների ամուր, ստուգված կադրեր, վորոնք միշտ պատրաստ կլինեն ոգնելու և աջակցելու պատի թերթին: Դրա համար հարկավոր է գյուղթղթակիցների ժողովներ գումարել, ավելի հաճախ զրույցներ ունենալ նրանց հետ, քննել նրանց թղթակցությունների թերությունները, գյուղթղթակիցներին սովորեցնել լավագույն որինակելի թղթակցությունների և հոդվածների քննության հիման վրա:

Ճիշտ են վարվում այն կոլտնտեսային պատի թերթերը, վորոնք գյուղթղթակիցների համար կազմակերպում են «Կրեստյանսկայա գազետայի» հեռակա դասընթացների դասախոսությունների ուսումնասիրության սեմինարներ կամ խմբակներ, ինչպես և կարդում են գյուղթղթակցային աշխատանքին վերաբերվող այն հոդվածները, վորոնք տպվում են «Բարոչե կրեստյանսկի կորրեսպոնդենտ» ժուռնալում:

Վորպեսզի գյուղթղթակիցների ակտիվի մեջ տարվող աշխատանքի, թղթակցությունները ընտրելու և հենց պատի թերթը լույս ընծայելու գործում դիմազրկություն և անպատասխանատվություն չլինի, անհրաժեշտ է պարտականությունները ճշտորեն



բաշխել խմբկոլի անդամների մեջ: Սա շատ կարևոր հարց է: Խմբկոլի յուրաքանչյուր անդամ պետք է պատասխանատվություն կրի գյուղթղթակիցների մեջ աշխատանք տանելու, համար վորոշ հարցերի մասին նյութեր ընտրելու համար, այն նյութերի, վորոնք խմբկոլի այդ անդամին ավելի մոտ ու ծանոթ են:

Խմբկոլի մեկ անդամին հանձնարարվում է, ասենք թե, կուսակցական- մասսայական և դաստիարակչական աշխատանքներին վերաբերող նյութեր հավաքելը, մյուսին հանձնարարվում է հավաքել ինֆորմացիա՝ հետաքրքիր տեղեկություններ կոլտնտեսության վարչության, կոլտնտեսային ակումբի, խրճիթ-լաբորատորիայի և այլնի աշխատանքների մասին, յերրորդին առաջադրանք է տրվում՝ պատի թերթում կազմակերպել աշխատանքի ստախանովյան մեթոդի լուսաբանումը, պայմանավորվել ստախանովականների և հարվածայինների հետ, վորպեսզի նրանք սիստեմատիկաբար իրենց աշխատանքի փորձը կոլտնտեսային ստորին մամուլի միջոցով հաղորդեն մյուս կոլտնտեսականներին: Խմբկոլի անդամներից մեկի վրա բացի այն հարցերից, վորոնց լուսաբանման համար նա պատասխանատու յե, պետք է դնել նաև խմբկոլի քարտուղարի պարտականությունները: Քարտուղարը պետք է թղթակցությունների հաշվառում տանի, գրանցի և պահպանի խմբկոլի բոլոր գրագրությունները գյուղթղթակիցների և զանազան կազմակերպությունների հետ (այդ աշխատանքի կազմակերպման մասին մանրամասն ասված է դասախոսության վերջին՝ «Պատի թերթի տնտեսությունը» գլխում):

# ՊԱՏԻ ԹԵՐԹԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆԸ

Խմբկոլի աշխատանքի կազմակերպման և պարտականությունները ճիշտ բաշխելու կարևորագույն միջոցներից մեկն է պատի թերթի աշխատանքի պլանը։

Յուրաքանչյուր պատի թերթ պետք է պլան ունենա։ Դա աշխատանքի ճիշտ կազմակերպման ամենաանհրաժեշտ միջոցն է։ Պլանը խմբկոլին հնարավորություն է տալիս՝ ընդգծել կոլտնտեսային արտադրության, կուլտուրայի ու կենցաղի հիմնական հարցերը, վորոնք պետք է լուսաբանել պատի թերթում, նախորոք պատրաստել այս կամ այն քաղաքական կամ տնտեսական կամպանիայի անցկացումը։ Պլանն ոգնում է նաև պարտականությունները խմբկոլի անդամների մեջ ճիշտ բաշխելուն և գյուղթղթակիցների հետ դաստիարակչական աշխատանք կատարելու գործը նախապես նշելուն։

Վորոշ պատի թերթերի պլանների թերությունն այն է, վոր այդ պլանները կազմվում են ընդհանուր ձևով, կտրված տվյալ կոլտնտեսության կոնկրետ հարցերից և առանց հաշվի առնելու այն, թե ով և ինչպես պետք է կատարի պլանով նախատեսված աշխատանքը։ Գրում են, ասենք թե, այսպիսի կետ. «Թղթակցություններ տալ սոցիալիստական մրցության մասին»։ Բայց ինչ կոնկրետ թեմաների մասին պիտի գրված լինեն այդ թղթակցությունները, ո՛վ և վո՛ր ժամկետին պիտի գրի, դրա մասին պլանում վոչինչ չի ասվում։

Պլանը պետք է լինի կոնկրետ, այնպես, վոր կիրառվի խմբկոլի և գյուղթղթակիցների ուժերով։ Պլանի թեմաները պետք է վերցնել հենց կոլտնտեսության կյանքից։ Ստախանովականների և հարվածայինների նամակներն ու առաջարկությունները— ահա այն հիմնական նյութը, վոր պետք է հաշվի առնվի պատի թերթի պլանը կազմելիս։



Պատի թերթի աշխատանքի պլան կազմելիս խմբկոլն ամենից առաջ պետք է հետապնդի մի հիմնական նպատակ. ոգնել կոլտնտեսականներին, կոլտնտեսությանը և կուսակցական կազմակերպությանը՝ պայքարելու արտադրական առաջադրանքների լավագույն կատարման համար, մարդկանց քաղաքական դաստիարակման համար, կոլտնտեսականների ե՛լ ավելի ունևոր ու կուլտուրական կյանքի համար։

Լավ համարվել կարող է միայն այն պատի թերթի պլանը, վորը կապահովի կոլտնտեսության կյանքի ու աշխատանքի արտացոլումն իր ամբողջ բազմապիսությամբ և միևնույն ժամանակ կկարողանա առաջ քաշել վճռական հարցերը, վորոնց առաջադրումով պատի թերթը կոլտնտեսությանն ու կոլտնտեսականներին կոգնի այն պայքարում, վոր մղում են նրանք ստալինյան բերքի համար, ե՛լ ավելի ունևոր ու կուլտուրական կյանքի համար։

Պլանի հիմքում պետք է վերցնել կուսակցության ու կառավարության վորոշումները։ Ներկա շրջանում, որինակ, խմբկոլը պլանը պետք է կազմի այն հաշվով, վորպեսզի ապահովի Համ Կ(բ)Կ Կենտկոմի Հունվարյան պլենումի վորոշումների ամենորյա պրոպագանդան և կենսագործումը, կուսակցական ղեկավար որգանների ընտրությունների ընթացքի ամենալավ լուսաբանումը, ինչպես և հանրապետությունների Գերագույն Խորհուրդների ընտրությունների նախապատրաստման ու կատարման հարցերի մարտական լուսաբանումը։

Գործնականորեն ինչպե՞ս սկսել պատի թերթի պլանի կազմումը։ Պլանը պետք է կազմվի կոլեկտիվ կերպով, ամբողջ խմբկոլի կողմից գյուղթղթակիցների և պատի թերթի ընթերցողների ակտիվ ոգնությամբ։

Պլանը պետք է կազմել իր ժամանակին։ Վորոշ խմբագիրներ սխալ կերպով յենթադրում են, թե համարի պլանը մշակել կարելի յե պատի թերթը լույս ընծայելու որը. շտապ կարգով հավաքեցիր խմբկոլը, հենց այդտեղ ել վորոշեցիր, թե ինչ պետք է տեղավորել և ապա, վորպես թե ամբողջը կատարված է։ Խմբագիրը և ելի մեկ յերկու մարդ թելերը քաշում են և տեղն ու տեղն իրենց թղթակցություններով լցնում թերթի համարը։ Համարը լույս է ընծայված, հանդստություն է տիրում, յեկավ հետևյալ համարը լույս ընծայելու ժամանակը, նորից խմբագիրը շտապ կարգով վորոշում է, թե ինչով լցնի թերթը։

Թերթի համարը այսպես «պլանավորել» չի կարելի: Ոչ թե միայն խմբագիրը, այլ ամբողջ խմբկոլը պետք է նախապես կոլեկտիվ կերպով քննարկի հերթական համարի բովանդակությունը և վորոշի, թե ինչպիսի նյութեր պետք է հավաքել, թե ինչպիսի թղթակցություններ ու հոդվածներ պետք է տեղավորել պատի թերթի այդ համարում, կոլտնտեսականներից ում ներգրավել այդ աշխատանքի մեջ:

Միանգամայն պարզ է, վոր խմբագիրը համարը հենց միայն լույս ընծայելու օրը պլանավորելիս չի նախատեսում և չի կարող նախատեսել, թե ինչ կապ կա տեղավորելիք թղթակցությունների և նախորդ համարներում տեղավորված թղթակցությունների միջև: Մինչդեռ խմբկոլի կարևորագույն խնդիրն այն է, վոր պատի թերթում տեղավորված նյութերի նկատմամբ դրական արդյունքների հասնի: Իսկ դրա համար հարկավոր է վերադառնալ առաջուց հարուցած հարցերին, հիշեցնել տեղավորված թղթակցությունները, հասնել նրանց գործադրության, իր ընթերցողներին տեղեկացնել, թե ինչ միջոցներ են ձեռք առնված պատի թերթում հարուցած այս կամ այն հարցի ուղղությամբ:

Պլանը պետք է կազմել մի քանի համարի համար, այն հաշվով, վոր խմբկոլը պարզ կերպով պատկերացնի իրեն պատի թերթի աշխատանքը վորոշակի ժամանակամիջոցում, վորպեսզի պլանում արտացոլված լինի պատի թերթի հարուցած հարցերի պատկերը, վորպեսզի պատի թերթը կարողանա հետևողականորեն, համար առ համար նյութեր տեղավորել սոցիալիստական մրցության ընթացքի մասին:

Տեսնենք, թե ինչպես է անում այդ Լենինգրադի մարզի Վիչկոմբակի շրջանի «Տրուժենիկ» կոլտնտեսային «Իսկրա» պատի թերթը: Այդ պատի թերթի խմբկոլը գարնանացանի ընթացքում մրցության ընթացքը լուսաբանելու հատուկ պլան է կազմել:

Բերենք մի հատված այս պլանից:

«Զրույցներ ունենալ հարվածային և ստախանովական կոլտնտեսականների՝ Կուզնեցովի, Սիլինի և Զախարովի հետ: Զրույցներն անց են կացնում խմբկոլի անդամներ՝ Ցարկոն և Բողդանովը՝ թղթակիցներ Ռախլովի և Կալցովի հետ միասին:

Հարվածային կոլտնտեսականներին ոգնել՝ կոլեկտիվ նամակ գրել բոլոր կոլտնտեսականներին՝ կոչ անելով գարնանացանն



որինակելի կատարելու համար մտնել սոցիալիստական մրցության մեջ:

Պատի թերթում տեղավորել կոլտնտեսականների արձագանքները մրցության մեջ մտնելու կոչին: Տեղավորել այն կոլտնտեսականների թղթակցությունները, վորոնք մրցության ոգնությամբ ինվենտարի նորոգման և սերմի զտման գործում բարձր ցուցանիշների յեն հասել»:

Սոցիալիստական մրցության պայմանագրեր կնքելով՝ կոլտնտեսականներն իրենց վրա կոնկրետ պարտավորություններ վերցրին: «Իսկրա» պատի թերթը կոլտնտեսականներին կոչ է անում անշեղորեն կատարել այդ պարտավորությունները: Նա տեղավորում է գյուղթղթակիցների մի շարք թղթակցություններն այն մասին, թե ինչպես են կատարվում սոցիալիստական մրցության պայմանագրերը:

5290

Կոլտնտեսային կյանքը չափազանց հարուստ ու բազմակողմանի յե: Ուստի և բնական է, վոր պատի թերթը սոցիալիստական մրցության հետ միասին պետք է լուսաբանի կոլտնտեսային կյանքի մի շարք ուրիշ հարցեր ևս: Հարկավոր է նախորոք մտածել և պլանի մեջ գրել կոլտնտեսականներին հետաքրքրող բոլոր կարևոր թեմաները:

Գործնականորեն պլանը կազմվում է այսպես. Նախ նշվում է այն կարևորագույն թեմաների ցուցակը, վորոնք պետք է լուսաբանվեն պատի թերթում: Այդ թեմաները նշելու համար խմբկոլը կապվում է կոլտնտեսության վարչության հետ, կուսակցական ու կոմյերիտական կազմակերպության հետ, ծանոթանում է նրանց պլաններին, զրուցում է կոլտնտեսության վարչության անդամների հետ և իմանում, թե նրանց կարծիքով վո՞ր հարցերը ցանկալի կլիներ մոտակա ժամանակաշրջանում լուսաբանել պատի թերթում:

Պլանի համար թեմաներ ընտրելու կարևոր աղբյուր է հանդիսանում պատի թերթին կոլտնտեսականների գրած նամակները: Հարկավոր է ուշադիր կարդալ բոլոր թղթակցությունները, բողոքները, կոլտնտեսականների հայտարարությունները ու առաջարկությունները և դրանցից պատի թերթի համար ընտրել այնպիսի հարցեր, վորոնք կարող են հետաքրքրել կոլտնտեսային հասարակայնությանը: Պլանի համար թեմաների վոչ պակաս կարևոր աղբյուր են հանդիսանում նաև կոլտնտեսականների հետ

ՀՍՍՀ-ССР

ունեցած զրույցները, կոլտնտեսականների խորհրդակցություններն ու ընդհանուր ժողովները, կոլտնտեսային ակումբի քաղխմբակների աշխատանքը և այլն:

Յենթադրենք, թե արդեն հավաքված են այն թեմաներն ու հարցերը, վորոնք պետք է նշվեն պլանում: Մնում է ձևակերպել պլանը, գրի առնել այն: Այստեղ գլխավորն այն է, վոր վոչ միայն թեմաների ու հարցերի ցուցակագրություն կատարվի, այլև նշվեն կատարման ժամկետները և խմբկոլի այն անդամների ու այն գյուղթղթակիցների ազգանունները, վորոնք պետք է այս կամ այն թեմայի մասին գրեն կամ նյութեր հավաքեն:

Պլանում գրի յեն առնվում նաև պատի թերթի հիմնական-մասսայական միջոցառումները (խորհրդակցություն գյուղթղթակիցների ու ընթերցողների հետ, խմբկոլի զրույցներն առաջավորների ու հարվածայինների հետ, գյուղթղթակցային պոստերի կազմակերպումը և այլն):

Այս բոլորը գրի յեն առնվում ընդհանուր պլանում, վորը սովորաբար կազմվում է մի ամսով կամ թե ցանքի, բերքահավաքի ժամանակամիջոցի համար:

Սակայն, բացի այսպիսի ընդարձակ պլանից, անհրաժեշտ է նաև պատի թերթի ընթացիկ համարի ավելի կոնկրետ ու ոպերատիվ պլան: Այդ ամենևին չի նշանակում, թե պատի թերթը պետք է ունենա իրարից բոլորովին անկախ յերկու պլան: Վո՛չ: Առանձին համարի պլանը՝ այդ պատի թերթի ընդհանուր աշխատանքի պլանի մի մասն է, նա բխում է պատի թերթի մեկ ամսվա աշխատանքի պլանից, կամ թե՝ վորևէ կամպանիայի լուսաբանման ընդհանուր պլանից:

Կյանքը շարունակ առաջ է քաշում նորանոր թեմաներ, վորոնք լրացնում են այն հիմնականը, վոր նախատեսված է ընդհանուր պլանում: Նշանակում է՝ հարկավոր է աշխատանքը վերակառուցել հենց իր ընթացքում: Պատի թերթի առանձին համարի պլանի մեջ մտցվում են այն բոլոր անհրաժեշտ լրացումներն ու փոփոխությունները, վորոնք առաջադրում է կյանքը: Ասենք թե՝ հրապարակված է կուսակցության ու կառավարության նոր վորոշումը: Բնական է, վոր խմբկոլը մինչև այդ վորոշումը պլանը կազմելիս չեր կարող նախատեսել այն հարցերը, վոր բարձրացված է նրա մեջ: Նշանակում է՝ հարկավոր է առաջվա պլանը փոփոխել կամ լրացնել այն, տեղավորել կոլտնտեսականների արձագանքները և այն նյութերը, վորոնք կոլտնտեսային մասսային մոբիլիզացիայի յեն յենթարկում կուսակցության ու կառավարության ցուցումների լավագույն կատարման համար:



Որինակ՝ խմբկոլն ստացել է գյուղթղթակցի մի հետաքրքիր նամակ, բրիգադներից մեկում մի նոր, կարևոր հարց է ծագել: Կոլտնտեսության վարչության նիստում կամ ընդհանուր ժողովում մի կարևոր վորոշում է ընդունվել: Կոլտնտեսության մեջ յերևան են յեկել նոր ստախանովականներ, վորոնք աշխատանքի արտադրողականության ամենաբարձր ցուցանիշներ են տալիս: Այս բոլորն անհրաժեշտ է լրացուցիչ կերպով մտցնել պատի թերթի հերթական համարի պլանի մեջ՝ վորպես լրացում առաջուց կազմված պլանի:

Պատի թերթի առանձին համարի պլանն անհրաժեշտ է նաև այն պատճառով, վոր միայն նրա մեջ կարելի յե ճշտորեն նախատեսել նրա հիմնական բովանդակությունը, հերթական համարի գլխավոր իմաստը: Յեթե, որինակ, ստախանովական կոլտնտեսականն իր աշխատանքի բնագավառում կիրառել է այնպիսի մեթոդ, վորն աշխատանքի արտադրողականությունն արագորեն բարձրացնելու հնարավորություն է տալիս, ապա պարզ է, վոր պատի թերթի հերթական համարում այդ դեպքին գլխավոր տեղը պետք է հատկացնել: Լավ նախաձեռնությունն անմիջապես պետք է վորսալ և ստախանովականի փորձը բոլոր կոլտնտեսականների սեփականություն դարձնել:

Կարողանալ դիտել, ուշադիր լսել այն, ինչ ասում են կոլտնտեսականները, ստուգել տեսածն ու լսածը, առաջին հայացքից մանր թվացող փաստերի մեջ վորսալ քաղաքական խոշոր հարցեր — ահա այն ամենաարժեքավոր հատկությունները, վորոնք պետք է զարգացնի իր մեջ յուրաքանչյուր խմբագիր և պատի թերթի խմբկոլի յուրաքանչյուր անդամ:

# ԽՄԲԿՈՒԼԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Խմբկուլի խորհրդակցությունը հրավիրում է խմբագիրը՝ կոլեկտիվ կերպով քննարկելու համար այն հիմնական հարցերը, որ կապված են պատի թերթը լույս ընծայելու հետ:

Պատի թերթի խմբագիրը նախապատրաստում է խմբկուլի խորհրդակցությունը, նշում է օրակարգը: Խորհրդակցությունում առաջին հերթին պետք է հաստատվի պատի թերթի հերթական համարի պլանը:

Պատի թերթի պատասխանատու խմբագիրը խմբկուլի անդամներին և գյուղթղթակցային ակտիվին նախապես հայտարարում է խորհրդակցության օրը, ժամը և տեղը, ինչպես և այն հարցերը, որոնք պետք է քննության առնվեն:

Խմբկուլի անդամները խորհրդակցությանը հաղորդում են, թե իրենց ձեռքի տակ ինչպիսի նյութեր կան, ինչ են արել իրենք պատի թերթի խմբկուլի և խմբագրի տված առաջադրանքը կատարելու համար:

Յերբ խորհրդակցության մասնակիցներն արտահայտում են իրենց դիտողությունները համարի մասին, դրանից հետո խմբկուլը քննության է առնում յեղած թղթակցություններն ու այն լրացումները, որոնք առաջադրում են կոլտնտեսության կյանքն ու յերկրում տեղի ունեցած քաղաքական վերջին դեպքերը:

Հաճախ խորհրդակցության ժամանակ պարզվում է, որ խմբկուլի անդամները լրիվ չեն կատարել իրենց տրված հանձնարարությունները, իսկ խմբագիրը չի հասցրել իր ժամանակին հետևել այդ առաջադրանքների կատարմանը: Աշխատանքի մեջ յեղած այդպիսի անկազմակերպությունը կարող է տապալել պատի թերթն իր ժամանակին լույս ընծայելու գործը: Ի՞նչ պիտի անել այդպիսի դեպքերում:

Իհարկե առաջադրանքը տապալողներին պետք է ընկերաբար քննադատել, որպեսզի նրանք նման սխալներ չկրկնեն: Միև-



նույն ժամանակ պետք է վճռական միջոցներ ձեռք առնել, որպեսզի չտապալվի հերթական համարի լույս ընծայումն այն ձևով, ինչպես պլանավորված է յեղել:

Յենթադրենք, թե խմբկուլի այն անդամը, որին հանձնարարված է յեղել նյութեր պատրաստել Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի համար, այդ թեմայի մասին միայն մեկ թղթակցություն ունի, այնինչ պետք է մի քանիսը լինեյին: Այդ դեպքում խմբագիրը տեղն ու տեղը յերկու-յերեք գյուղթղթակցի հանձնարարում է հավաքել պակասող թղթակցությունները, իսկ խմբկուլի անդամներից մեկին հանձնարարում է կազմակերպել կոլտնտեսականներից առաջարկություններ հավաքելու գործը:

Աշխատանքի այդպիսի «ավրալային» մեթոդների չդիմելու համար անհրաժեշտ է խմբկուլի խորհրդակցության նախորյակին ստուգել, թե արդյոք ամե՞ն ինչ պատրաստ է համարի համար: Այդ հարցով պետք է զբաղվի ամենից առաջ պատի թերթի պատասխանատու խմբագիրը:

Խմբկուլի այն խորհրդակցությունում, որ նվիրված է պատի թերթի համարը լույս ընծայելուն, նպատակահարմար է դեռ համառոտակի քննարկել նաև հետագա մի քանի համարների պլանները: Խմբկուլի յուրաքանչյուր անդամ հետևյալ համարի մասին իր առաջարկությունը պետք է անի: Այս պայմաններում խմբկուլն ու պատի թերթի ակտիվը ժամանակ կունենան հարցերն ուսումնասիրելու, թղթակցություններ գրելու, մտքերի փոխանակություն ունենալու, ստախանովականների, բրիգադիրների, կուսկազմակերպիչի և այն բոլոր ընկերների հետ, որոնց ցանկալի յե մասնակից անել պատի թերթի հետևյալ համարներին:

Պատի թերթն իր ժամանակին լույս ընծայելու շահերը պահանջում են այդ գործին ամենալայն չափերով մասնակից անել կոլտնտեսային ակտիվին, առաջին հերթին գյուղթղթակիցներին: Միշտ էլ կոլեկտիվ կարգով կարելի յե ավելի լավ մտածել ու վորոշել պատի թերթի համարի բովանդակությունը:

---

# ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԶԳՈՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Խմբագիրն ու ամբողջ խմբկոլը շատ ուշադիր պետք է լինեն դեպի այն նյութերը, վոր ուղարկվում է պատի թերթին: Հարկավոր է աչալուրջ հետևել, վոր ժողովրդի թշնամիները չխցկվեն պատի թերթի մեջ, վոր գյուղթղթակիցների շարքերը խորթ մարդիկ չընկնեն: Խմբագիրն ու խմբկոլի անդամները պետք է գործնականում բոլշևիկորեն կատարեն կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի Հունվարյան Պլենումի վորոշումը, վորը խնդիր է դնում՝ «ամեն կերպ բարձրացնել կուսակցության մասսաների բոլշևիկյան զգոնությունը, մերկացնել ու մինչև վերջ արմատախիլ անել կուսակցության բոլոր կամովին ու ակամա թշնամիներին»:

Պատի թերթի խմբկոլը պետք է հիշի, վոր իսկական բոլշևիկյան զգոնությունը՝ այդ նշանակում է թշնամուն բարեկամից տարբերելու կարողություն: Ժողովրդի թշնամիների, հայրենիքի մատնիչների ու դավաճանների նկատմամբ ունեցած անողոքություն ու անհաշտությունը պետք է կարողանալ զուգակցել զգայուն և ուշադիր վերաբերմունք դեպի յուրաքանչյուր մարդը, վորը նվիրված է կուսակցությանը, նվիրված է սոցիալիստական շինարարության գործին, բայց անփորձության կամ չգիտության հետևանքով թույլ է տալիս այս կամ այն սխալը: Հարկավոր է ուշադիր հետևել, վոր թշնամական տարրերը, գերզգաստության դիմակ հագած՝ չզրպարտեն ազնիվ աշխատողներին: Պետք է մերկացնել դիմակավորված թշնամուն, վոր մեր շարքերը խցկված՝ աշխատում է զգաստության մասին կեղծ ճիչերով ծածկել իր թշնամական վերաբերմունքը դեպի կուսակցությունն ու Խորհրդային իշխանությունը, քողարկել իր նողկալի վնասարարական աշխատանքը:

Դիմակազերծ անելով թշնամիներին, մերկացնելով կարյերիստներին, իրենց ապահովագրողներին և բոլոր նրանց, ովքեր հանդիսանում են թշնամիների կամա թե ակամա աջակիցները,



պատի թերթի խմբկոլը պետք է ուշի-ուշով խորամուխ լինի այս կամ այն մարդուն մեղադրող թղթակցությանը: Միայն այդ միջոցով կարելի յե կանխել ազնիվ ու նվիրված մարդկանց դեմ գրված թշնամական, զրպարտչական հերյուրանքներով թղթակցությունների տպագրումը թերթում: Այս բանը պետք է պարզ գիտակցի պատի թերթի խմբկոլի յուրաքանչյուր անդամ:

Կոլտնտեսային պատի թերթերի աշխատանքի ընթացքում քիչ դեպքեր չեն յեղել, յերբ առանձին մարդիկ անձնական հաշիվներից դրդված՝ վորևէ մեկին զրպարտելու նպատակով գիտակցաբար անճիշտ փաստեր են հաղորդել թերթին: Այդպիսի հանցագործությունները անպատիժ չպետք է մնան: Զրպարտիչներին պետք է խիստ պատասխանատվության յենթարկել: Նայած թե տվյալ դեպքում խմբկոլն ում հետ գործ ունի՝ զրպարտչին պետք է մերկացնել կամ հենց պատի թերթում, կամ ընդհանուր ժողովում և կամ հետաքննչական ու դատական մարմինների միջոցով:

Կույբիշևի մարզի Շեղոնյան շրջանի Բերեզովկա գյուղում կոլտնտեսական Շչերբակովը հաճախ գրում էր, թե գյուղխորհրդի նախագահը ճնշում է ինքնաքննադատությունը, պետական գումարներ է յուրացնում և այլն: Պատի թերթի խմբկոլն ստուգեց այդ փաստերը: Պարզվեց, վոր Շչերբակովը հարբեցող է, անասունների վոչնչացման համար վտարվել է կուսակցությունից և այժմ ցանկացել է վարկաբեկել գյուղխորհրդի աշխատողներին, զրպարտում է կոմունիստներին ու ազնիվ անկուսակցականներին: Պատի թերթը վոչ միայն նրան վտարեց գյուղթղթակիցների շարքերից, այլև շրջանային մարմիններին հաղորդեց, վոր անհրաժեշտ է նրան, վորպես զրպարտչի, պատասխանատվության յենթարկել:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի Հունվարյան Պլենումի վորոշման մեջ նշված է, վոր «մեր շատ կուսկազմակերպություններն ու նրանց ղեկավարները մինչև այժմ չեն կարողացել տեսնել ու մերկացնել վարպետորեն դիմակավորված թշնամուն, վորն աշխատում է զգոնության մասին ճիչերով քողարկել իր թշնամությունը և մնալ կուսակցության շարքերում, այս առաջին, և յերկրորդ, վորը ձգտում է ռեպրեսիայի միջոցներ կիրառելու միջոցով փշրել մեր բոլշևիկյան կադրերը, մեր շարքերում անվստահություն ու ավելորդ կասկածամտություն ցանել:

Այդպիսի դիմակավորված թշնամին — կատաղի դավաճանը,

սովորաբար բոլորից բարձր է գոռում զգոնության մասին, շտապում է որքան կարելի է ավելի շատ «մերկացնել» և այդ բոլորն անում է նպատակ ունենալով ծածկել իր սեփական հանցագործությունները կուսակցության առաջ և կուսակցական կազմակերպության ուշադրությունը հեռացնել ժողովրդի իսկական թշնամիներին մերկացնելուց»:

Պատի թերթի խմբկոլը ՀամԿ(բ)Կ Կենտկոմի Հունվարյան Պլենումի այս ցուցումից պետք է համապատասխան եզրակացություն անի: Նա պետք է զգոն լինի, որպեսզի պատի թերթում տեղ չտա դիմակավորված թշնամիների, սուտ պրովոկատորների և մատնիչների ամեն տեսակի բամբասանքին:

Որոշ պատի թերթեր, դեպի մարդիկ ունենալով ընդհանուր, ոչ անհատական մոտեցում, իրենք են զրպարտչական նյութեր տեղավորել: Դեպքեր են եղել, երբ թերթերի էջերն են թափանցել ժողովրդի դիմակավորված թշնամիներ, որոնք փորձել են մամուլն օգտագործել իրենց նողկալի, քայքայիչ գործունեության համար, թերթերի էջերն են թափանցել կարյերիստներ ու վերապահովագրվողներ:

Յուրաքանչյուր պատի թերթի պարտականությունն է՝ հրապարակորեն քննադատել իր սխալները, ամենագործնական միջոցներ ձեռք առնել, որպեսզի հետագայում չկրկնվեն այդ սխալները, հասարակական կարծիքի առաջ վերականգնել զրպարտվածների վարկն ու պատիվը, մերկացնել զրպարտիչներին, վերապահովագրվողներին, ժողովրդի թշնամիներին:

Այնտեղ, ուր խոսքը վերաբերում է թշնամիներին, խմբկոլը պետք է անողոք լինի նրանց մինչև վերջ մերկացնելու գործում: Իսկ այնտեղ, ուր խոսքը վերաբերում է մեր ազնիվ խորհրդային մարդկանց քննադատությանը, այնտեղ պետք է, որքան կարելի է, ավելի շատ զգայնություն ու զգուշություն հանդես բերել:



# ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԾԱՎԱԼԵԼ ԽՄԲԿՈԼՈՒՄ

Կոլտնտեսային պատի թերթերից մեկը թղթակցություն էր տպել մի օղակի վատ աշխատանքի մասին: Առավոտյան խմբագրի մոտ եկավ հուզված օղակավարը և հայտարարեց, որ իր օղակը գերակատարել է արտադրական պլանը և խմբագրից պահանջեց թերթում հերքում տեղավորել: Խմբագիրը ստուգեց օղակի ցուցանիշները և համոզվեց, որ իրոք՝ այդ օղակն առաջավոր է: Պարզվեց, որ սխալը կատարվել է թղթակցությունը բնագրից պատի թերթում արտագրելիս: Չնայած դրան, խմբագիրը հրաժարվեց պատի թերթում ուղղում տպել, անտեղի կերպով արատավորված օղակավարին հայտարարելով, թե «դատարկ բան է»:

Սակայն կոլտնտեսականները չհամաձայնեցին թերթի սխալի նկատմամբ խմբագրի այդ թեթևամիտ վերաբերմունքի հետ: Նրանք խմբագրից գանգատ տվին կուսկազմակերպչին: Եվ միայն կուսկազմակերպչի պնդումով թերթն ուղղում հրապարակեց:

Իհարկե, խմբագիրն իրավացի չէր: Պատի թերթը պետք է անհապաղ ուղղի իր սխալները:

Իր սխալի բացահայտ ու արագ ընդունումն ամենևին էլ վնաս չի տալիս պատի թերթին, այլ, ընդհակառակն, ուժեղացնում է նրա գործունեությունը, բարձրացնում է նրա հեղինակությունը:

Սխալներն ու պատի թերթի բովանդակության նկատմամբ անփույթ վերաբերմունքն ամենից շատ հանդիպում են այնտեղ, որտեղ իրենց համար բույն են հյուսել անպատասխանատվությունն ու քաղաքական անհոգությունը: Այդ անհոգությունը երբեմն քաղաքական կոպիտ սխալների է հասցնում: Այդ դեպքում միայն ուղղումով գործը չի շտկվի: Քաղաքական

սխալներից ավելի լուրջ դասեր պիտի քաղել: Անհրաժեշտ է բարձրացնել խմբկոլի քաղաքական զգոնությունը, նրա մեջ պատասխանատվության զգացմունքն արթնացնել յուրաքանչյուր բառի համար:

Երբեմն պատի թերթում տեղավորված թղթակցությունների մասին հերքում են բերում խմբկոլ: Ինչպե՞ս վարվել այդ հերքումների հետ:

Այս հարցը հետաքրքրում է շատ պատի թերթերի խմբագիրների: Չէ՞ որ լինում են զանազան հերքումներ՝ ճիշտ և սուտ հերքումներ:

Ի՞նչ անել ճիշտ հերքումները: Դրանք անպայման պետք է տեղավորել պատի թերթում: Ինչու՞ չի տպվում այդպիսի հերքումը: Նա պատասխան է հանդիսանում այն սխալ, սուտ թղթակցություններին, որոնք մոլորության մեջ են գցում կոլտնտեսության հասարակայնությունը: Պատահում է, որ գյուղթղթակիցը սխալ փաստ է հաղորդում և խմբկոլն, առանց ստուգելու, թերթում հրապարակում է այդ սխալ տեղեկությունը: Պատահում է նաև, որ ինքը՝ խմբկոլն է մեղավոր լինում հարցի սխալ դրվածքի համար:

Այդ բոլոր դեպքերում խմբկոլը պարտավոր է հերքումներ տեղավորել և ուղղել թերթում թույլ տված սխալները:

Այն զրպարտիչները, որոնք դիտավորյալ կերպով սուտ փաստեր են հաղորդել պատի թերթին, պետք է խստորեն պատժվեն: Նրանց ոչ միայն պետք է քննադատել պատի թերթում, այլև հարկավոր է զրպարտության համար դատի տալ:

Իսկ եթե խմբկոլը սուտ հերքում է ստանու՞մ: Այդպիսի դեպքերը սակավ չեն: Օրինակ՝ պատի թերթը քննադատել է մի լոդրի: Նա շտապում է հերքում գրել, որով, առանց ապացույցների հավաստիացնում է, թե իր մասին սուտ են գրել, թե ինքն ամենևին էլ լոդր չէ: Խմբկոլը պետք է մի անգամ ևս ստուգի թղթակցության ճշտությունը: Եթե այն հաստատվում է, ապա պարզ է, որ լոդրի հերքումը պատի թերթում չպետք է տեղավորել: Խմբկոլը պետք է պնդի, որ այն կոլտնտեսականը, որի աշխատանքի թերությունների մասին ճշտորեն գրված է թղթակցության մեջ, ձեռնամուխ լինի իր սխալներն ուղղելու:



Առանձին բարդ գործերը, որոնք խմբկոլն ինքն իր ուժերով լուծել չի կարող, պետք է մինչև վերջ հասցնել՝ դիմելով կուսակցական կազմակերպության, շրջանային, մարզային, կամ կենտրոնական մամուլի օգնությանը:

---

# ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄՇԱԿՈՒՄԸ

Ի՞նչ պետք ե անի խմբկոլը, յերբ արդեն պատի թերթի հերթական համարի բոլոր նյութերը հավաքված են։

Ամենից առաջ հարկավոր ե ընտրել այն թղթակցությունները, վորոնք ամենագլխավոր հարցերի մասին են խոսում և պատի թերթում աչքի ընկնող տեղ հատկացնել դրանց։ Հիմնականը, վորով պետք ե ղեկավարվեն խմբագիրն ու խմբկոլի անդամները, այն ե, վոր պատի թերթում տեղավորելու համար նախատեսված յուրաքանչյուր թղթակցություն համապատասխանի կոմունիստական կուսակցության քաղաքականությանը և ոգնի կոլտնտեսության աշխատանքը բարելավելուն։ Իսկ այն թղթակցությունները, վորոնք վորևե չափով աղավաղում են կուսակցության քաղաքականությունը, վոչ մի դեպքում չեն կարող տեղավորվել պատի թերթում։

Յեթե թղթակցության մեջ հաղորդված փաստերը կասկած են առաջացնում, պետք ե ստուգի ինքը՝ խմբագիրը, կամ խմբկոլի անդամներից վորևե մեկը։ Յեթե ստուգման ժամանակ փաստերը հաստատվում են, ի հարկե, թղթակցությունը պետք ե տեղավորել պատի թերթում։ Յեթե հաստատվել ե թղթակցության մեջ նշված փաստերի միայն մի մասը, այդ դեպքում հեղինակի հետ պետք ե խոսել և նրան նշել, վոր անպայման անհրաժեշտ ե ստուգել այն բոլոր նյութերը, վոր նա մտածում ե տալ պատի թերթին։

Գյուղթղթակիցների մեծամասնությունը գրում ե արտադրական թեմաների մասին։ Այդ թղթակցությունների հետ շատ ուշադիր պիտի վարվել։ Պատահում ե, որինակ, այսպես. գյուղթղթակիցը հաղորդում ե, թե այս կամ այն ստախանովական այսինչ ռեկորդն ե սահմանել։ Բայց այդ ստախանովականն ի՞նչ մեթոդներով ե հասել իր հաղթանակին— դրա մասին ընկերը չի հաղորդում։ Մինչդեռ ընթերցողի համար այդ հետաքրքրական ե և կարևոր ե իմանալ, վորպեսզի փոխ առնի ստախանովյան աշխատանքի փորձը։ Այդպիսի դեպքում գյուղթղթակցին պետք ե խնդրել, վոր փոփոխի իր թղթակցությունը, ավելի կոնկրետ գրի այն, ստախանովյան աշխատանքի որինակներ բերի, ցույց տա այն միջոցներն ու ձևերը, վորոնց ոգնությամբ ստախանովականը արտադրական բարձր ցուցանիշների յե հասել։

Խմբկոլներին խորհուրդ ենք տալիս ավելի հաճախ զրուցել ակտիվ հեղինակների հետ, քննադատորեն վերլուծել գյուղթղթակիցների տված թղթակցությունները, որինակներով ցույց տալ թե այս կամ այն թղթակցությունն ինչու՞ ուղղումների կարիք ե զգում կամ ինչու չի կարող տեղավորվել թերթում։ Միաժամանակ գյուղթղթակիցներին պետք ե պատմել, թե պատի թերթի հետևյալ համարին ինչի մասին և ինչպես պիտի գրել։

Ի՞նչ պետք ե անել գյուղթղթակիցների տված թղթակցությունները՝ պատի թերթում տեղավորելուց առաջ։

Ամենից առաջ հարկավոր ե ստուգել այնտեղ նշված փաստերը, ապա գրականապես մշակել այն։ Խմբագիրը թղթակցության գրական մշակումը հանձնարարում ե խմբկոլի միայն այն անդամներին, վորոնք իրենք բավականաչափ գրականապես ու քաղաքականապես զարգացած են, վորոնք թղթակցություններն ուղղելու փորձ ունեն։ Խմբկոլի մյուս անդամները պետք ե սովորեն ավելի փորձվածներից։

Հերթական համարի համար թղթակցություններ ընդունելուց հետո խմբկոլն այդ թղթակցություններն այնպես պետք ե ուղղի, վորպեսզի այն ամբողջ կարևորը, վոր ցանկացել ե ասել թղթակիցը, մնա թղթակցության մեջ։ Յուրաքանչյուր թղթակցություն պետք ե լինի կոնկրետ, ընթերցողին հասկանալի։ Խմբագրի պարտականությունն ե՝ ստուգել, թե խմբկոլի անդամները վորքան լավ են ուղղել թղթակցությունը, արդյոք չե՞ն աղավաղել հեղինակի միտքը։

Խմբագիրն անձամբ պետք ե խմբկոլի անդամներին ոգնի, վոր ավելի լավ մշակեն գյուղթղթակիցների թղթակցությունները։

Թղթակցությունների ուղղման և պատի թերթի գրական ձև-

վավորման գործին կարելի յե մասնակից անել ուսուցիչներին: Երբեմն պատի թերթի խմբկոմի անդամները չեն կարողանում իրենց մտքերը բավականաչափ գրագետ շարադրել թղթի վրա: Ուսուցիչը կարող ե մեծ օգնություն ցույց տալ խմբկոմին: Հարկավոր ե միայն այնպիսի պայմաններ ստեղծել, որ ուսուցիչն իրեն յուրային զգա խմբկոմի մեջ, որպեսզի նա խմբկոմի անդամներին ու գյուղթղթակիցներին օգնի սովորել մայրենի լեզուն:

Բայց ահա թղթակցությունները, նկարները ու մյուս նյութերը պատրաստ են պատի թերթի հերթական համարում տեղավորելու համար: Այժմ մնում ե ձևավորել համարը, թղթակցությունները տեղավորել որոշ կարգով, պատի թերթը գեղարվեստորեն ձևավորել:

Խմբագիրն այս ամբողջ աշխատանքը պետք ե բաժանի խմբկոմի անդամների և պատի թերթի մյուս ակտիվիստների մեջ: Մասնավորապես հարկավոր ե հատուկ ուշադրություն դարձնել նկարազարդման վրա — լուսանկարներ, ծաղրանկարներ, նկարներ և այլն: Յուրաքանչյուր խմբագիր գիտի, որ նկարները պատի թերթը դարձնում են՝ ավելի հետաքրքրական, ցայտուն ու հրապուրիչ: Նշանակում ե՝ հարկավոր ե հոգ տանել նկարների մասին: Խմբագիրն իմանում ե, թե գյուղթղթակիցներից, դպրոցականներից ո՛վ ե կարողանում ծաղրանկարներ անել, ո՛վ ե կարողանում լուսանկարել և այդ մարդկանց ներգրավում ե պատի թերթի աշխատանքների մեջ, նրանց նկարելու, լուսանկարելու կոնկրետ թեմաներ ե տալիս:

Քառյակները, վոտանավորները, փոքրիկ պատմվածքները պատի թերթն ե՛լ ավելի հետաքրքրական են դարձնում: Խմբագիրը պետք ե խմբկոմի անդամների ու գյուղթղթակիցների օգնությամբ քառյակներ, վոտանավորներ հավաքի: Պատի թերթի լավ խմբագիրը թերթի շուրջը կոլտնտեսականներից ստեղծում ե մըշտական գրական ստեղծագործական ակտիվ: Կոլտնտեսականների գրական ստեղծագործությունը պատի թերթում զգալի տեղ պիտի հատկացվի:

Խմբագիրը պարտավոր ե հոգ տանել նաև պատի թերթի արտաքին ձևավորման մասին: Խմբկոմի անդամներից մեկին, կամ պատի թերթի ամենագրագետ ակտիվիստին հանձնարարում ե թղթակցությունների վերնագրերը գրել, մյուսին հանձնարարում ե թղթակցությունները դասավորել համարում և կպցնել մի թերթ



թղթի վրա, յերրորդին հանձնարարում ե գունավոր մատիտներ, ներկեր ընտրել, գունավոր թղթի նեղ շերտեր կտրել, որոնցով պետք ե մի թղթակցությունը բաժանել մյուսից, որպեսզի նըրանց տեքստերը չխառնվեն իրար:

Ահա այսպես կոլեկտիվ ու համերաշխ աշխատանքով պետք ե լույս ընծայվի պատի թերթի յուրաքանչյուր համարը:

# ՊԱՏԻ ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ ՏԵՍՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ

Պատի թերթի հերթական համարը լույս տեսավ: Այժմ ի՞նչ պիտի անի խմբկոլը:

Ամենից առաջ պետք է այնպես անել, որ պատի թերթի համարը բոլոր կոլտնտեսականները կարդան: Դրա համար խորհուրդ է տրվում բրիգադներում ու օղակներում կազմակերպել ամենահետաքրքրական թղթակցությունների բարձրաձայն ընթերցանություն: Բարձրաձայն ընթերցանության նպատակն է՝ պատի թերթի բովանդակությունը դարձնել բոլոր կոլտնտեսականների սեփականությունը, այդ թվում նաև անգրագետ ու կիսագրագետ կոլտնտեսականների, պատի թերթում տեղավորված նյութերի մասին հարուցել կոլտնտեսականների արձագանքները: Բարձրաձայն ընթերցանությունը պատի թերթում նկարագրված՝ աշխատանքի ստախանովյան մեթոդների պրոպագանդայի ձևերից մեկն է:

Լավ ընթերցողներ պետք է հանդես գան խմբկոլի անդամներն ու ակտիվ գյուղթղթակիցները:

Պատի թերթի նոր համարը կախվում է ամենաաչքի ընկնող մի տեղ: Սովորաբար նրա մոտ անմիջապես ժողովուրդ է հավաքվում: Կոլտնտեսականները մի թղթակցությունով ավելի շատ են հետաքրքրվում, մյուսով՝ քիչ, յերրորդից դժգոհ են մնում: Լսվում են հավանության ու անհավանության բացականչություններ, քննադատական դիտողություններ, գործնական առաջարկություններ և այլն: Հենց այստեղ էլ հաճախ լուծվում են այս կամ այն թղթակցությունից բխող կարևորագույն հարցեր: Այստեղ կարելի յե լսել կոլտնտեսականների կարծիքը պատի թերթի բովանդակության մասին, այն մասին, թե նրանց կարծիքով հերթական համարում ինչ է պակասում, ելի ում պետք էր քննադատել, ում գովաբանել:

Պատի թերթի համարի մասին ընթերցողների արած այդ բոլոր դիտողությունները շատ կարևոր են խմբագրի համար, խմբկոլի անդամների ու գյուղթղթակիցների համար: Դրանք ավելի քիչ կարևորություն չունեն, քան հատկապես հրավիրված ընթերցողների վորևե ժողով: Ուստի խմբագիրն ու խմբկոլի անդամները պետք է պատի թերթի նոր լույս տեսած համարի մոտ լինեն, ուշադիր ականջ դնեն կոլտնտեսականների բոլոր խելացի դիտողություններին ու առաջարկություններին և պատի թերթի հետևյալ համարը լույս ընծայելիս հաշվի առնեն դրանք:

Յերևան հանել կոլտնտեսականների կարծիքը պատի թերթի բովանդակության մասին, պարզել, թե հերթական համարում նրանց ինչն է դուր յեկել և ինչը՝ վոչ — այդ խմբկոլի ու գյուղթղթակիցների կարևորագույն խնդիրներից մեկն է: Այդ գործն այնքան էլ հասարակ բան չէ, ինչպես թվում է առաջին հայացքից: Ահա թե ինչու խմբագիրն ու խմբկոլի անդամները պատի թերթի հերթական համարը լույս ընծայելուց հետո պետք է նրա բովանդակության մասին զրուցեն կոլտնտեսականների ու կոլտնտեսուհիների հետ: Այդպիսի զրույցները կոլտնտեսականներին մոտեցնում են թերթին, աճեցնում են նրա ակտիվը:

Պատի թերթի համարը լույս ընծայելուց հետո խմբկոլն ինքն էլ պետք է քննադատորեն դիտի այն, քննարկի, թե վո՞ր հարցերն են լավ լուսաբանված, ի՞նչ է բաց թողնված, ի՞նչ բան պետք է հաշվի առնել պատի թերթի հետևյալ համարը պատրաստելիս: Այդ ինքնաքննադատությունը խմբկոլին կօգնի հետագայում խուսափել թույլ տված սխալներից և պատի թերթը դարձնել ավելի աշխույժ ու հետաքրքրական:

Օգտակար է նաև պատի թերթի հերթական համարի մասին նրա ընթերցողների առաջին տպավորությունները հավաքելուց հետո խմբկոլի ու գյուղթղթակիցների ժողով գումարել: Լույս տեսած համարի քննարկությանը նվիրված ժողովին պետք է հրավիրել նաև թղթակցությունների հեղինակներին ու թերթի ակտիվին: Քննադատությունը պետք է վերաբերի վոչ միայն խմբկոլի սխալներին, այլև գյուղթղթակիցների գործունեությանը: Պետք է քննադատել այն գյուղթղթակիցներին, ովքեր անճիշտ փաստեր են հաղորդել, իրենց թղթակցություններում հարցերը մակերեսորեն են լուսաբանել, բավականացել են միայն խմբկոլին թղթակցություն տալով, իսկ տեղում, իրենց բրիգադում, օղակում վոչինչ չեն արել իրենց նկարագրած թերությունները վերացնելու ուղղությամբ:

Պատի թերթի բովանդակության քննարկումն ու քննադատությունը դաստիարակչական խոշոր նշանակություն ունի: Դա դպրոցի նման մի բան է, վորտեղ և՛ խմբկոլի անդամները, և՛ գյուղթղթակիցները հենց իրենց նյութերի վրա աշխատելով, սովորում են սխալներն ուղղել, սովորում են ավելի լավ գրել:

Կոլտնտեսային ակտիվի քննադատության նկատմամբ ուշադիր վերաբերմունքի ցայտուն օրինակ կարող են ծառայել Սարատովի մարզի Պուգաչևի շրջանի Զապաևի անվան կոլտնտեսության պատի թերթերը: Այստեղ սիստեմատիկաբար կոլտնտեսության ակտիվի հետ միասին գումարվում են կուսակցական դռնբաց ժողովներ՝ նվիրված լույս տեսած պատի թերթերի քննադատական վերլուծմանը: Մի հատված բերենք այդպիսի մի ժողովի արձանագրությունից.

«Կոլտնտեսային պատի մամուլի աշխատանքի մասին զեկուցումով հանդես յեկավ կուսկազմակերպիչ ընկ. Ցանինը: Նա հայտարարեց, վոր շատ բրիգադային պատի թերթեր փնթի, անհրապույր տեսք ունեն, լի են սխալներով:

Մյուսներից լավ է աշխատել դաշտավարական յերկրորդ բրիգադի պատի թերթի խմբկոլը: Այդ թերթի խմբագիրը սովորել է գյուղթղթակիցների հեռակա դասընթացներում, ցանքի ընթացքում լույս է ընծայել 4 համար պատի թերթ:

«Խմբկոլի թույլ աշխատանքը, — հայտարարեց ընկ. Ցանինը, — բացատրվում է նրանով, վոր կոմունիստները, փոքըր բացառությամբ, չեն մասնակցում նրանց աշխատանքին»:

Ընկ. Ցանինից հետո հանդես յեկած կոմունիստներն ու անկուսակցական ընկերները զգալիորեն լրացրին զեկուցողին:

«Մենք, ընկերներ, — ասաց յերկրորդ բրիգադի բրիգադիր ընկ. Ռինդինը, — քիչ ենք զբաղվում պատի թերթերով: Այնինչ պատի թերթերը, յերբ լավ են աշխատում, մեզ շատ են օգնում: Շատ թղթակցություններ, կարելի յե ասել, «բուժում են մեր թերությունները»:

Մեր բրիգադային պատի թերթի խմբագիր ընկ. Սուզդալցևան լավ է աշխատում, կարողանում է թերթ պատրաստել:

Բրիգադիր Ռինդինին առարկեց կոմունիստ Ն. Ա. Գորդեյենկոն՝ միևնույն բրիգադից:

Նա ասաց.

«Ճիշտ է, Սուզդալցևան կարողանում է թերթ պատրաստել, կարողանում է նյութեր կազմակերպել նրա համար, նա միշտ թղթակցություններ ունենում է, միայն թե նա միշտ ստիպված է լինում դրդել սրան կամ նրան, մանավանդ, յերբ հարկավոր է լինում վորևէ մեկին քննադատող թղթակցություն տեղավորել:

Քննադատությունն ու ինքնաքննադատությունն օգնում են թերությունների ուղղելուն: Բայց յերբեմն պատի թերթում քննադատվող ընկերները խեթ են նայում գյուղթղթակիցների ու խմբկոլի վրա: Ահա հենց այդտեղ էլ մենք՝ կոմունիստներս պետք է օգնության գանք խմբկոլին, ավելի շատ մասսայական բացատրական աշխատանք կատարենք, քան անում ենք այժմ»:

Ապա խոսք վերցրեց կոլտնտեսության նախագահ շքանշանակիր Ա. Ի. Պենկովը:

«Մենք պատի թերթերի խմբկոլներ ենք ընտրել, — ասաց նա, — բայց այդ մարդկանց հետ վոչ մի աշխատանք չենք կատարել: Այդ սխալը պետք է անհապաղ ուղղել:

Մեր ընթերցողներից վոմանք բարձրաձայն վատ են կարդում, կոլտնտեսականներին հասկանալի բացատրություններ տալ չեն կարողանում: Կուսկազմակերպիչն ու կուլտուրինկը պետք է զբաղվեն նրանցով, սովորեցնեն ավելի լավ կազմակերպել ընթերցանությունները:

Օգտակար կլինի բրիգադային պատի թերթերի փոխանակություն կատարել՝ աշխատանքի փորձի փոխադարձ փոխանցման համար»:

Աշխատանքի ու պատի թերթերի ղեկավարության քննադատությամբ հանդես յեկան համակրող ընկ. Մուզյոնինը և ուրիշ ընկերներ: Յուրաքանչյուրն իր կարծիքն եր հայտնում և կոնկրետ առաջարկություններ անում»:

Ընկերներին խորհուրդ ենք տալիս վերցնել գյուղթղթակիցների մի քանի բնորոշ թղթակցություններ և մանրամասն վերլուծել: Թղթակցություններից մեկը նրանով է լավ, վոր գրված է կոնկրետ, մյուսը չափազանց ընդհանուր բնույթ ունի, յերրորդ թղթակցության մեջ անորոշություններ կան, ազգանունն աղավաղված է, թվերը՝ խառնված և այլն: Առանձին թղթակցությունների և ամբողջ համարի բովանդակության այսպիսի գործնական քննադատական վերլուծությունը մեծ օգուտ կտա ինչպես

խմբկոլին, այնպես էլ իրենց՝ գյուղթղթակիցներին։ Խմբկոլի այդպիսի խորհրդակցությունները գյուղթղթակիցների ակտիվի հետ կարելի յե նվիրել վոչ թե միանգամից բոլոր հարցերին, այլ մի վորևե ավելի կարևոր թեմայի, որինակ՝ քննարկել, թե պատի թերթը վորքան է քաղաքականապես կայուն, վորքան լավ ու գըրագետ են գրված պատի թերթի թղթակցությունները կամ թե՝ վորքա՛ն լավ է պատի թերթի տվյալ համարի տեխնիկական ձևավորումը։



# ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

Պատի թերթում տեղավորված նյութերի գործունության համար մղվող պայքարը պատի թերթերի բարձրաձայն ընթերցանությամբ չի վերջանում, այլ միայն սկսվում է։

Յենթադրենք, թե պատի թերթը հարց է դրել բրիգադում աշխատանքի այնպիսի կազմակերպման մասին, վորը բրիգադին հնարավորություն է տալիս ամբողջովին ստախանովական դառնալ։ Սա կարևոր հարց է և անպայման կհետաքրքրի բոլոր կոլտնտեսականներին։ Այստեղ արդեն չպետք է բավարարվել առանձին կոլտնտեսականների մեկ-յերկու պատասխան տալով։ Հարկավոր է, վոր թղթակցությունը քննության առնի ամբողջ բրիգադը և իր կարծիքն արտահայտի։

Կոլտնտեսականների ընդհանուր ժողովներում առանձին թըղթակցություններ քննարկելը պատի թերթի գործունության համար պայքարելու միջոցներից մեկն է։

Որինակ՝ պատի թերթը քննադատել է կոլտնտեսության նախագահին։ Նախագահը հասարակայնության առաջ ընդունել է իր սխալները և սկսել է ուղղել դրանք։ Հասարակայնության աչքում այդ նախագահի հեղինակությունը խիստ բարձրացել է։ Բարձրացավ նաև պատի թերթի հեղինակությունը։ Կոլտնտեսականները տեսան, վոր նախագահը գնահատում է մասսաների քըննադատությունը, կարողանում է ուղղել իր սխալները։

Պատահում է, վոր պատի թերթում տեղավորած նյութերը վոչ մի ազդեցություն չեն գործում կոլտնտեսության այս կամ այն ղեկավար աշխատողի կամ շարքային կոլտնտեսականի վրա։ Այդպիսի դեպքում ի՞նչ պիտի անի խմբկոլը։

Նա աջակցության համար պետք է դիմի կոլտնտեսության հասարակայնությանը, կոլտնտեսականների ընդհանուր ժողովին,

խակ անհրաժեշտության դեպքում՝ շրջանային, մարզային թերթին, ՀամԿ(բ)Կ շրջանային կոմիտեին, դատախազությանը և այլն:

Ահա թե Վիննիցայի մարզի Լյախովեցկի շրջանի «Ստալինյան բերքի համար» կոլտնտեսության «Կրասնի մայակ» պատի թերթն ինչպես է պայքարում իր թղթակցությունների գործունության համար:

Վերջերս խմբկոլը կոլտնտեսականներից մի թղթակցություն ստացավ՝ «Մի՞թե սա ակումբ է» վերնագրով: Այդ թղթակցության մեջ կոլտնտեսականները գրում էին, թե կոլտնտեսության վարչությունն ակումբի նորոգումն սկսեց, բայց չավարտեց: Թղթակցությունը տեղավորեցին պատի թերթում, սակայն կոլվարչությունը դրա վրա վոչ մի ուշադրություն չդարձրեց: Այն ժամանակ խմբկոլն այդ հարցը դրեց կոլտնտեսականների քննարկմանը և թղթակցության պատճենն ուղարկեց ոկրուգային «Շըլյախ Ժովտնյա» թերթին: Ոկրուգային թերթն այդ թղթակցությունը տպագրեց: Դրանից հետո կոլտնտեսության վարչությունն արագ ավարտեց ակումբի նորոգումը:

Պատի թերթում ստացված վոչ մի թղթակցություն անուշադիր չի մնում: Խմբկոլը բոլոր հնարավոր միջոցներով աշխատում է, վոր յուրաքանչյուր թղթակցության առթիվ միջոցներ ձեռք առնվեն:

Յուրաքանչյուր պատի թերթ իր սկսած գործը մինչև վերջ հասցնելու հարցում պետք է համառ լինի:

Յեթե մի թղթակցությունը չօգնեց, հարկավոր է նորից վերադառնալ հարուցած հարցին, նոր փաստեր ընտրել և հրապարակել:

Ժողովրդի թշնամիները, կապիտալիզմի ստոր ռեստավրատորները՝ ֆաշիզմի տրոցկիստական — բուխարինական վարձկաններն ու նրանց գործակիցները բոլշևիկյան ինքնաքննադատությունից վախենում են ինչպես կրակից: Կյանքը ցույց տվեց, վոր այդ նողկալի թշնամիներն անպատիժ գործել են գլխավորապես այնտեղ, վորտեղ բոլշևիկյան ինքնաքննադատությունը խեղդված է յեղել:

Բոլշևիկյան ինքնաքննադատությունը տանել չեն կարողանում բյուրոկրատները, ճրիակերները, կոլտնտեսային բարիքը հափշտակողները: Պատի թերթը կուսակցական կազմակերպության և



կոլտնտեսական մասսաների ոգնությամբ պետք է անողոք մերկացնի ինքնաքննադատության բոլոր թշնամիներին:

Պատի թերթի խմբկոլը պարտավոր է հետևել, վոր գործուն լինեն վո՛չ միայն մերկացնող թղթակցությունները, վորոնց մեջ քննադատվում են այս կամ այն թերությունները: Գործուն պետք է լինեն պատի թերթի բոլոր նյութերը, ինչպես մերկացնողները, այնպես էլ նվաճումների մասին գրած թղթակցությունները:

Շատ կարևոր է այն պայքարը, վոր մղվում է աշխատանքի դրական փորձը նկարագրող թղթակցությունների գործունության համար: Յեթե, ասենք, պատի թերթը նկարագրել է հարվածային, ստախանովական կոլտնտեսականի հետաքրքիր փորձը, հարկավոր է հետևել, վոր այդ փորձն ոգտագործեն ուրիշներն էլ: Դրա համար թերթում պետք է պատասխաններ տպել այդ ստախանովականի յելույթին, տպել նյութեր, վորոնք ցույց տան, թե պատի թերթի նկարագրած դրական փորձն ինչպես է կիրառվում աշխատանքի մյուս բնագավառներում: Յերբ պատի թերթը ձեռնարկել է մի վորևէ գործի, պետք է շարունակել այն և հասցնել մինչև վերջը:

***

Կոլտնտեսություններում շատ պատի թերթեր կարելի յե գտնել, վորոնք լույս են տեսնում դեպքից-դեպք, ամիսը մեկ անգամ, յերբեմն էլ յերեք ամիսը մեկ: Այդպիսի թերթերը պատին կախված այնքան են մնում, մինչև վոր գունաթափ են լինում և փոշով ծածկվում: Պարզ է, վոր այդպիսի պատի թերթերը կյանքից հետ են մնում:

Գործուն լինել կարող է միայն այն թերթը, վոր լույս է տեսնում կանոնավոր, վորոշակի ժամկետներին: Պատի թերթի հենց միայն հաճախակի լույս տեսնելու փաստն ուժեղացնում է կոլտնտեսային հասարակայնության ուշադրությունը թերթի նկատմամբ: Հինգ որը մեկ կամ որընդմեջ լույս տեսնող թերթը շատ ավելի մեծ հաջողությամբ կարող է ոգնել սոցիալիստական մրցության ծավալմանը, ավելի հաճախ կարող է տպագրել աշխատանքների կատարման արդյունքները, ավելի արագ կարող է թափ տալ հետ մնացողներին, որըստորե ոգնել սոցիալիստական մրցությանը, աշխատանքի ստախանովյան որինակներն ավելի արագ կարող է փոխադրել կոլտնտեսության աշխատանքի

մյուս բնագավառները, քան, ասենք, տաս օրը մեկ լույս տեսնող թերթը:

Նույնիսկ ամենօրյա թերթն արդեն նորություն չէ կոլտնտեսություններում: Գյուղատնտեսական աշխատանքերի յեռուն շրջանում — գարնանացանի, բերքահավաքի ժամանակ և այլն հարյուրավոր պատի թերթեր լույս են տեսնում ամեն օր:

Պատի թերթի հաճախակի լույս ընծայումը նպաստում է նրա գործունեության ուժեղացմանը: Այսօր պատի թերթը մի թերություն նշեց, վաղը կամ մի քանի օր հետո նա հնարավորություն ունի վերադառնալու նույն հարցին, հիշեցնելու նրա մասին, նորից հանդես գալու: Թղթակցությունները արագ ու իր ժամանակին լույս ընծայելն ակտիվացնում է գյուղթղթակիցներին: Նրանք սիրով են գրում այն պատի թերթին, որը չի ուշացնում թղթակցությունների տպագրությունը և կարողանում է գործը մինչև վերջ հասցնել: Այս իմաստով շատ կարևոր է հաշվի առնել լավագույն ամենօրյա պատի թերթերի փորձը:

պատի թերթն ամեն օր լույս ընծայելու կարևորագույն պայմանն է՝ ըստ հնարավորին գյուղթղթակցական մեծ ակտիվ ըստեղծել: Յեթե դիմենք լավագույն գործարանային պատի թերթերի փորձին, որոնք արդեն մի քանի տարի յե, ինչ ամեն օր են լույս տեսնում, ապա կտեսնենք, որ նրանք բոլորն էլ խմբկոլում ու նրա շուրջը համախմբած մի քանի տասնյակ մարդ ունեն: Այսպես՝ «Կոմսոմոլկա» պատի թերթը (Մոսկվայի՝ Լ. Մ. Կագանովիչի անվան գնդառանցքակալների գործարան) մինչև 200 հոգի ակտիվ ունի: Որպես կանոն ամենօրյա պատի թերթերի ակտիվի մեծ մասը կազմում են ստախանովականներն ու հարվածայինները: «Վոզդուխոռասպրեդելիտել» ամենօրյա պատի թերթը (Մոսկվայի արգելակային գործարան) թղթակիցների մեջ ունի 90 ստախանովական: Այդ թերթի խմբկոլն ամեն օր ստախանովականներից ու հարվածայիններից 12-14 թղթակցություններ է ստանում:

Կոլտնտեսային պատի թերթերի խմբկոլներն ամենօրյա թերթի կարող են անցնել միայն նախապատրաստական մեծ աշխատանքից հետո, յերբ գյուղթղթակիցների մեծ ակտիվ կունենան և յերբ կսովորեն աշխատել ճշտորեն ու կազմակերպված ձևով:

Գլխավորն այն է, որ լավ նախապատրաստվեն ամենօրյա պատի թերթ լույս ընծայելուն: Ավելորդ շտապողականությունն



այստեղ միայն վնասել կարող է: Ավելի լավ է սկզբում սովորել կանոնավոր կերպով մարտական, գրագետ գրած թերթ լույս ընծայել 3—5 օրը մեկ, օրընդմեջ, իսկ հետո արդեն ամենօրյա թերթի հարց դնել:

մյուս բնագավառները, քան, ասենք, տաս օրը մեկ լույս տեսնող թերթը:

Նույնիսկ ամենօրյա թերթն արդեն նորություն չէ կոլտնտեսություններում: Գյուղատնտեսական աշխատանքների եռուն շրջանում — գարնանացանի, բերքահավաքի ժամանակ և այլն հարյուրավոր պատի թերթեր լույս են տեսնում ամեն օր:

Պատի թերթի հաճախակի լույս ընծայումը նպաստում է նրա գործունեության ուժեղացմանը: Այսօր պատի թերթը մի թերություն նշեց, վաղը կամ մի քանի օր հետո նա հնարավորություն ունի վերադառնալու նույն հարցին, հիշեցնելու նրա մասին, նորից հանդես գալու: Թղթակցությունների արագ ու իր ժամանակին լույս ընծայելն ակտիվացնում է գյուղթղթակիցներին: Նրանք սիրով են գրում այն պատի թերթին, որը չի ուշացնում թղթակցությունների տպագրությունը և կարողանում է գործը մինչև վերջ հասցնել: Այս իմաստով շատ կարևոր է հաշվի առնել լավագույն ամենօրյա պատի թերթերի փորձը:

պատի թերթն ամեն օր լույս ընծայելու կարևորագույն պայմանն է՝ ըստ հնարավորին գյուղթղթակցական մեծ ակտիվ ստեղծել: Եթե դիտենք լավագույն գործարանային պատի թերթերի փորձին, որոնք արդեն մի քանի տարի չէ, ինչ ամեն օր են լույս տեսնում, ապա կտեսնենք, որ նրանք բոլորն էլ խմբկոլում ու նրա շուրջը համախմբած մի քանի տասնյակ մարդ ունեն: Այսպես՝ «Կոմսոմոլկա» պատի թերթը (Մոսկվայի՝ Լ. Մ. Կագանովիչի անվան գնդառանցքակալների գործարան) մինչև 200 հոգի ակտիվ ունի: Որպես կանոն ամենօրյա պատի թերթերի ակտիվի մեծ մասը կազմում են ստախանովականներն ու հարվածայինները: «Վոզդուխորասպրեդելիտել» ամենօրյա պատի թերթը (Մոսկվայի արգելակային գործարան) թղթակիցների մեջ ունի 90 ստախանովական: Այդ թերթի խմբկոլն ամեն օր ստախանովականներից ու հարվածայիններից 12-14 թղթակցություններ է ստանում:

Կոլտնտեսային պատի թերթերի խմբկոլներն ամենօրյա թերթի կարող են անցնել միայն նախապատրաստական մեծ աշխատանքից հետո, երբ գյուղթղթակիցների մեծ ակտիվ կունենան և երբ կսովորեն աշխատել ճշտորեն ու կազմակերպված ձևով:

Գլխավորն այն է, որ լավ նախապատրաստվեն ամենօրյա պատի թերթ լույս ընծայելուն: Ավելորդ շտապողականությունն այստեղ միայն վնասել կարող է: Ավելի լավ է սկզբում սովորել կանոնավոր կերպով մարտական, գրագետ գրած թերթ լույս ընծայել 3—5 օրը մեկ, օրընդմեջ, իսկ հետո արդեն ամենօրյա թերթի հարց դնել:

# ԽՄԲԱԳՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Շատ պատի թերթերի խմբագիրներ մոռանում են, որ խմբկոլը պետք է տարին 3—4 անգամ իր աշխատանքի մասին հաշվետա իրեն ընտրող կոլտնտեսականների ընդհանուր ժողովի առաջ: Խմբագրի, ինչպես և խմբկոլի անդամների հաշվետվությունը պատի թերթում կատարած իրենց աշխատանքի մասին՝ պատի թերթի ճիշտ աշխատանքի ամենակարևոր պայմանն է:

Կոլտնտեսականների առաջ խմբկոլի հաշվետվությունը հարկավոր է մասսաների հետ նրա կապն ամրապնդելու համար, նրա համար, որ կոլտնտեսականներն առաջարկություններ անեն պատի թերթի աշխատանքի բարելավման ուղղությամբ:

Պատի թերթի աշխատանքի մասին հաշվետվություն կամ զեկուցումներ պետք տալ կենդանի ձևով, որպեսզի կոլտնտեսականների հետաքրքրությունն ավելի ուժեղանա թերթի նկատմամբ: Այդպիսի կենդանի ձև է հանդիսանում, օրինակ, ընթերցողների ժողովը, որտեղ պետք է լայնորեն ծավալվի պատի թերթի ու խմբկոլի քննադատությունը: Հենց այդ ժողովում էլ անհրաժեշտ է բոլոր կոլտնտեսականներին մասնակից անել պատի թերթի առաջիկա համարների և նրա ամբողջ հետագա աշխատանքի քննարկմանը:

Ընթերցողների ժողովի նախապատրաստության վրա հատուկ ուշադրություն պետք դարձնել: Որտեղ այդ ժողովներն վատ են կատարվում, միշտ էլ անբավարար արդյունքի են հասնում: Ահա թե ինչու անհրաժեշտ է ընթերցողներին նախօրոք պատրաստել, այնպես անել, որ կոլտնտեսականները ժողովի գան թերթից ունենալով որոշակի պահանջներ, նրա աշխատանքի բարելավման ուղղությամբ կոնկրետ առաջարկություններ:

Խորհուրդ է տրվում ընթերցողների ժողովն սկսելուց առաջ կոլտնտեսականների հետ զրույցներ ունենալ: Այդ զրույցների ժամանակ պետք է պարզել, թե պատի թերթի լեզուն հասկանալի՞ է կոլտնտեսականներին, ինչ թղթակցություններ են կարդացել նրանք և այդ թղթակցություններում ի՞նչն է դուր յեկել նրանց, և ի՞նչ հարցեր չի լուսաբանել պատի թերթը, թերթի ո՞ր յելույթն են առանձնապես արժեքավոր համարում կոլտնտեսականները, ի՞նչ են առաջարկում խմբկոլի աշխատանքի բարելավման համար:

Ընթերցողների ժողովը սովորաբար սկսվում է պատի թերթի խմբագրի համառոտ զեկուցումով՝ իրենց կատարած աշխատանքի մասին: Խմբագիրը պատմում է, թե թերթն ինչպես է պայքարել կուսակցության ու կառավարության որոշումների կենսագործման համար, կոլտնտեսության արտադրական պլանի կատարման համար: Նա պետք է անպայման ասի, թե խմբկոլը կոլտնտեսականներին ինչպես է ներգրավել այս կամ այն կամպանիայի կատարման գործի մեջ, կոլտնտեսականներից ու կոլտնտեսուհիներից ով և ինչպես է մասնակցում պատի թերթին, ինչպիսի աշխատանք է կատարվում նամակների ուղղությամբ, արդյոք պատի թերթի սկսած բոլո՞ր գործերն են մինչև վերջը հասցվել, ո՞վ է խանգարում պատի թերթի աշխատանքին: Հնարավորին չափ լայնորեն պետք է լուսաբանել ընթերցողների արած առաջարկությունների վիճակի հարցը:

Պատի թերթի քննադատությունն ու կոլտնտեսականների կոնկրետ առաջարկություններն անպայման պետք է արտացոլեն պատի թերթի հետագա աշխատանքի մեջ:

# ՊԱՏԻ ԹԵՐԹԻ „ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ"

Պատի թերթերի խմբկոլները պետք է հոգ տանեն, վոր լավ կազմակերպեն իրենց «տնտեսությունը», վորի վրա շատ կոլտնտեսային ու բրիգադային պատի թերթերի խմբկոլներ հաճախ ուշադրություն չեն դարձնում:

Վերցնենք, որինակ, պատի թերթերի հին համարների պահպանությունը: Այդ համարներից յուրաքանչյուրը մի արժեքավոր փաստաթուղթ է կոլտնտեսության պատմության համար: Մինչդեռ մի շարք կոլտնտեսություններում պատի թերթերի հին համարները վոչնչացվում, կորչում են անհետ:

Վատ են պահպանվում նաև գյուղթղթակիցների տված թղթակցությունները: Պատահում է, վոր խմբկոլը չի կարողանում տեղեկություն տալ գյուղթղթակիցներին իրենց թղթակցությունների մասին, վորովհետև թղթակցությունները կորած են լինում:

Խմբկոլը պետք է հատուկ ուշադրություն դարձնի թղթակցությունների հաշվառման վրա: Խմբկոլում կանցելյարշչինա չըպետք է ստեղծել, սակայն հաշվառումը մոռացության տալ նույնպես չի կարելի: Պատի թերթի աշխատանքի հաշվառումն անհրաժեշտ է: Խմբկոլը պետք է իմանա, թե ինչ են գրում պատի թերթին և ինչ են արված թղթակցությունները: Ճիշտ հաշվառումը խմբկոլին հնարավորություն կտա ուզած րոպեյին պատասխանելու թղթակցությունների վիճակի մասին տրված հարցերին, պատի թերթի աշխատանքի մասին, հնարավորություն կտա հաշվետվություն պատրաստել կուսակցական կազմակերպության ժողովի, կոլտնտեսականների ժողովի համար և այլն:

Ինչպե՞ս ավելի լավ կլինի դնել այդ հաշվառումը:

Խորհուրդ ենք տալիս ունենալ թղթակցությունների հաշվառման մի տետրակ: Ամեն որ ստացված թղթակցությունները



գրանցվում են այդ տետրակում: Հաշվառում տանողը գրի յե տանում մոտավորապես այսպիսի տեղեկություններ. համարն ըստ կարգի, թղթակցությունն ստացվելու ժամանակը, հեղինակի ազգանունը, վորտեղ է աշխատում նա, թղթակցության թեման (ինչի մասին է գրում), ինչ է արված թղթակցությունը (յերբ է տպված կամ ուղարկված հետաղոտության և այլն), ինչ միջոցներ են ձեռք առնված թղթակցության առթիվ:

Այս տեղեկությունները գրանցվում են մի սովորական տետրակում, վորի մեջ քանոնով գծեր են քաշված լինում: Ավելի պարզ լինելու համար այստեղ տանք թղթակցությունների հաշվառման տետրակի մի եջի որինակելի ձևը.

## ՊԱՏԻ ԹԵՐԹԻ ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏԵՏՐԱԿ

| №№ ը/կ | ստացման ժամանակը | ով է գրել (հեղինակի ազգանունը) վորտեղից | ինչի մասին է գրում | ինչպես է օգտագործված թղթակցությունը | թղթակցության արդյունքը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |

Այսպիսի հաշվառում է կատարում Կուրսկի մարզի Լիվենսկի շրջանի Ստալինի անվան կոլտնտեսության պատի թերթը: Աշխատանքի այդպիսի կարգը խմբկոլին հնարավորություն է տվել նորանոր կոլտնտեսականների ներգրավել գյուղթղթակիցների շարքերը: Բարձրացել է թերթի հեղինակությունը:

Իսկ գյուղթղթակիցների հաշվառման համար կարելի յե մոտավորապես այսպիսի տետր ունենալ.

## ՊԱՏԻ ԹԵՐԹԻ ԳՅՈՒՂԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏԵՏՐ

| №№ ը/կ | Ազգանունն անունն հայրանուն | վորտեղ է աշխատում և վորպես ինչ | տարիքը | կուսակցականություն կամ կ(բ)կ անդամ, թեկն., համակիր, ԼԿՅԵՄ անդամ, թեկն. անկ. | հասարակական աշխատանքը | աշխատանքը պատի թերթում | | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | |

Պատի թերթի խմբագրի անհատական տպավորությունները գյուղթղթակիցների մասին՝ ավելի լավ է գրի առնել անձնական գրքույկում (օրագիր, բլոկնոտ), որ խորհուրդ ենք տալիս ունենալ յուրաքանչյուր խմբագրին: Այդպիսի անձնական գրքույկում գրի յեն առնվում պատի թերթի համար օգտակար մյուս բոլոր տեղեկությունները— թվականներ, թվեր, ազգանուններ, փաստեր և այլն: Գրանցման գրքույկը կազմակերպում է լրագրային աշխատողին, նրան վարժեցնում է դիտողականության, ողնում է առանձին դեպքեր ուսումնասիրել:

Ուշադիր պետք է լինել դեպի գյուղթղթակիցների տված թղթակցությունների պահպանումը: Անթույլատրելի յե այդ թղթակցությունները գրպաններում պահել կամ զանազան տեղեր խցկել: Թղթակցությունները թերթում հրապարակելուց հետո չի կարելի նրանց բնագրերը ոչնչացնել: Բնագրերը կարող են պետք գալ հերքման դեպքում կամ հեղինակին թղթակցությունն ուղղելու մասին բացատրություններ տալիս:

Թղթակցությունների բնագրերը, մանավանդ այն թղթակցությունների, որոնք ուղարկվել են հետաքննության, կարևոր փաստաթուղթ են հանդիսանում և դրանք պետք է պահպանել շատ խնամքով:

***

Պարտականությունները խմբկոլի անդամների միջև բաժանելիս քարտուղարին հանձնարարվում է վարել թերթի «տնտեսությունը»: Նա ցուցակագրում է ստացվող թղթակցությունները, հսկում է թղթակցությունների արխիվին, լուսանկարների, նկարների ու թերթերի հին համարների արխիվին: Քարտուղարի մոտ են լինում թուղթը, ներկերը և թերթի ձևավորման մյուս նյութերը: Քարտուղարին հանձնարարվում է կազմել խմբկոլի խորհրդակցությունների արձանագրությունները, որոնցով միշտ կարելի յե ստուգել, թե ինչպես են կատարվում խմբկոլի որոշումներն ու գյուղթղթակիցների առաջարկությունները:

Կան անփույթ խմբագիրներ, որոնք թերթի հերթական համարը լույս ընծայելու համար անհրաժեշտ բաներ պահելու մշտական տեղ չունեն: Երբ հարկավոր է ձեռնամուխ լինել հերթական համարը լույս ընծայելուն, միայն այդ ժամանակ այդ ընկերներն սկսում են անհանգստանալ, թե որտեղից թուղթ, վրձին, ներկ և այլն ճարեն:



Աշխատանքի այդպիսի անկուլտուրական կազմակերպումն վատ է անդրադառնում նաև պատի թերթի բովանդակության վրա. խմբկոլն իզուր տեղը երկար ժամանակ է կորցնում պատի թերթը ձևավորելու տեղ ու նյութեր փորձելով: Հետևանքը լինում է այն, որ թերթն ուշանում է, թղթակցությունները կորցնում են իրենց արժեքը:

Ամեն տեղ էլ չի կարելի պատի թերթի խմբկոլի համար հատուկ սենյակ ստանալ: Սակայն յուրաքանչյուր պատի թերթ կարող է ունենալ իր որոշակի անկյունը:

Ամենից լավ է պատի թերթը լույս ընծայելու տեղ հատկացնել ակումբում կամ կարմիր անկյունում:

Պատի թերթ լույս ընծայելու համար հարկավոր է ձեռք բերել հետևյալ իրերը. քանոն՝ տառեր ու վերնագրեր նկարելու համար, գրչածայրեր, արաբախեժ (գումերաբիկ)՝ թղթակցություններն ու վերնագրերը կպցնելու համար, մկրատ, կարկին, պատճենահան թուղթ (կարող է պետք գալ ժուռնալներից ու թերթերից հարմար տառի պատճեն հանելու համար):

Ժամանակի խնայողության նպատակով խորհուրդ է տրվում համարը լույս ընծայելիս թղթակցությունները մաքուր արտագրելու համար նախօրոք թուղթ կտրտել նեղ, ընթերցանության համար հարմար շերտերով:

Նախօրոք պետք է հոգ տանել նաև նկարազարդման մասին— լուսանկարներ, նկարներ: Սխալ է կարծել, թե պատի թերթը կարող է օգտվել միայն նկարազարդ հին ժուռնալներից, ինչպես, դժբախտաբար, անում են շատ անփորձ խմբագիրներ, որոնք ժուռնալներից զանազան լուսանկարներ ու նկարներ են կտրում և կպցնում պատի թերթում: Անհրաժեշտ է պատի թերթում օգտագործել տեղական ինքնուս նկարիչների ու սիրող լուսանկարիչների ստեղծագործությունները:

Խմբկոլի համար շատ կարևոր է միշտ իր ձեռքի տակ տեղեկատու նյութեր ունենալ: Հաճախ պատահում է, որ ընկերները թղթակցություններ ուղղելիս չեն իմանում, թե այս կամ այն բառն ինչպես պետք է գրվի, որ ճիշտ լինի: Այդ դեպքում ուղղագրական փոքրիկ բառարանը կարող է անգնահատելի ծառայություն մատուցել: Անհրաժեշտ է, որ խմբկոլն ունենա իր փոքրիկ գրադարանը: Այդ գրադարանում պետք է լինեն մամուլի հարցերին վերաբերվող գրքեր ու ժուռնալներ («Ռաբոչի—

կրեսայանակի կորեսպոնդենտ» ժուռնալի կոմպլեկտ և այլն)։ Նույն տեղը պետք պահել այն գրքերը, վորտեղ տպված են առաջնորդների զեկուցումներն ու ճառերը։ Սա անհրաժեշտ է նրա համար, վոր խմբկոլն ուզած բոպեյին կարողանա սկզբնաղբյուրով ստուգել մեջբերումները։ Այն դեպքերում, յերբ մեջբերումները պետք ստուգել Լենինի ու Ստալինի յերկերի ժողովածուներով, կլասիկների գրքերով կամ կենտրոնական թերթերով, այդ դեպքում պատի թերթի խմբկոլը պետք է դիմի կոլտնտեսային գրադարան։

Մեզ կարող են հարց տալ. իսկ վո՞րտեղ միջոցներ գտնել պատի թերթի տնտեսության համար։

Այդ, իրոք, կարևոր հարց է։ Գործնականում հաճախ է լինում, վոր խմբագիրները պատի թերթի համար նյութեր են ձեռք բերում իրենց անձնական միջոցներով։ Ցերբեմն նրանք ստիպված են լինում սրանից–նրանից թուղթ, թանաք և այլն խնդրել։ Պատի թերթը լույս ընծայելուն անհրաժեշտ միջոցները պետք է բաց թողնեն կոլտնտեսությունների վարչությունները՝ կուլտֆոնդի գումարներից։

***

Յուրաքանչյուր պատի թերթի խմբագրի, խմբկոլի անդամի ու գյուղթղթակիցների խնդիրն է՝ այս դասախոսությունն ուսումնասիրելով՝ ձեռնամուխ լինի բարելավելու պատի թերթի ամբողջ աշխատանքը։ Պատի թերթերը հարկավոր է ակտիվացնել առանձնապես այժմ, յերբ ամբողջ յերկիրը պատրաստվում է քաղաքական խոշոր կարևորություն ունեցող մի կամպանիայի— հանրապետությունների Գերագույն Խորհուրդների ընտրություններին։ Օգտագործելով դասախոսության ցուցումները՝ պատի թերթի աշխատողները պետք է հանդես բերեն իրենց նախաձեռնությունը և այնպես անեն, վոր պատի թերթերը յերբեք չհանդըստանան ձեռք բերածով, այլ անընդհատ բարելավվի ու հաղթանակից հաղթանակ գնա։



## ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Վո՞րն է խմբկոլի դերը։

2. Ինչպե՞ս ավելի լավ է բաշխել պարտականությունները խմբկոլի անդամների միջև։ Պատմեցեք, թե ինչպես է աշխատում ձեր խմբկոլը։

3. Ի՞նչ դեր է խաղում պլանը պատի թերթի աշխատանքում և ինչի յե հասցնում պլանի բացակայությունը։ Օրինակներ բերեք ձեր փորձից։

4. Ինչպե՞ս կազմել պատի թերթի պլանը։

5. Ինչ պետք է անի խմբկոլը պատի թերթի հերթական համարը լույս ընծայելուց անմիջապես հետո։

6. Ի՞նչ նշանակություն ունի պատի թերթում տեղավորած թղթակցությունների քննարկումը կոլտնտեսականների արտադրական խորհրդակցություններում։

7. Պատի թերթի հետևյալ համարները լույս ընծայելու համար ինչ նշանակություն ունի լույս տեսած համարի քննադատությունը և ինչպես կատարել այդ քննադատությունը խմբկոլի ներսում, պատի թերթի գյուղթղթակիցների ու ընթերցողների մեջ։

8. Ինչպես վարվել հերքումների հետ այն դեպքերում, յերբ հերքումը ճիշտ է, և այն դեպքերում, յերբ հերքումը ճիշտ չէ։

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Կազմեցեք ձեր պատի թերթի աշխատանքի պլանն առաջիկա ամսվա համար։ Այդ պլանը ձեզ հետ բերեք սույն դասախոսության ուսումնասիրությանը նվիրված կոնսուլտացիային։

2. Ձեր կոլտնտեսությունում, բրիգադում ժողով գումարեցեք, նվիրված ձեր պատի թերթի վերջին 3—4 համարների քննադատությանը։

3. Դիտեցեք, թե ձեր խմբկոլի անդամների մեջ ինչպես է բաշխված աշխատանքը և, յեթե ճիշտ չի բաշխված, կամ ամենևին բաշխված չէ, քննության առեք այդ հարցը և օգտվելով այդ դասախոսության խորհուրդներով, վերակառուցեցեք խմբկոլի աշխատանքը։

04

ՀՀ Ազգային գրադարան
NL0143974

418

15744

ՏՐՎՈՒՄ Է ՁՐԻ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՅԵՐՐՈՐԴ

С. ДАНИЛИН

*Работа редколлегии
Стенной газеты*

Заочные курсы редакторов
колхозных и бригадных стенгазет

Издательство ЦККП (б) Арм. „Хорурдаин Айастан"
Ереван, 1938 г.